

Հավելված  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2022 թվականի ապրիլի 27-ի  
№ 173-L որոշմամբ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Երևան 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	3
1. <b>Օրենսդրական բարեփոխումներ</b> .....	4
2. <b>Էներգետիկայի բնագավառ</b> .....	14
2.1. <i>Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ</i> .....	14
2.2. <i>Սակագնային քաղաքականություն</i> .....	18
2.3. <i>Լիցենզավորում և լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրեր</i> .....	20
2.4. <i>Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ</i> .....	21
2.5. <i>Վերականգնվող էներգետիկա</i> .....	24
3. <b>Ջրային ոլորտ</b> .....	26
3.1. <i>Իրավական ակտերի բարեփոխումներ</i> .....	26
3.2. <i>Սակագնային քաղաքականություն</i> .....	28
3.3. <i>Մոնիթորինգ և ջրամատակարարման գրաֆիկների համաձայնեցում</i> .....	29
4. <b>Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ</b> .....	31
4.1. <i>Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ</i> .....	31
4.2. <i>Ենթակառուցվածքների զարգացում, ընդլայնում, նոր տեխնոլոգիաների ներդրում և ծառայությունների հասանելիության ապահովում</i> .....	32
4.3. <i>Մրցակցության խթանում (երաշխավորում), սպառողների շահերի պաշտպանություն, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի հուսալիության ու անվտանգության ապահովում</i> .....	39
5. <b>Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն</b> .....	41
6. <b>Սպառողների շահերի պաշտպանություն</b> .....	43
6.1. <i>Սպառողների դիմումների քննարկում</i> .....	43
6.2. <i>Սպասարկման որակի ցուցանիշներ</i> .....	45
7. <b>Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը</b> .....	52
8. <b>Միջազգային համագործակցություն</b> .....	54
9. <b>Հանձնաժողովի ֆինանսավորում և պետական բյուջեի մուտքեր</b> .....	58

## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է, որն օրենքներով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կարգավորում է էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառները և ջրային ոլորտը:

Հանձնաժողովը 2021 թվականին գործել է հետևյալ կազմով.

Գարեգին Բաղդասյան՝ հանձնաժողովի նախագահ,

Սերգեյ Աղինյան՝ հանձնաժողովի անդամ,

Սեդա Շահինյան՝ հանձնաժողովի անդամ,

Կամո Սարգսյան՝ հանձնաժողովի անդամ,

Արա Նռանյան՝ հանձնաժողովի անդամ (2021 թվականի հոկտեմբերի 5-ից):

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- 1) Սակագնային քաղաքականության վարչություն,
- 2) Իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- 3) Հեռահաղորդակցության վարչություն,
- 4) Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն,
- 5) Գործերի կառավարման վարչություն,
- 6) Անձնակազմի կառավարման բաժին,
- 7) Հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- 8) Միջազգային համագործակցության բաժին:

Հանձնաժողովի բնականոն աշխատանքը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն, համակարգում և ապահովում է հանձնաժողովի նախագահը, իսկ հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակում հանձնաժողովի անդամները և գլխավոր քարտուղարը:

## 1. Օրենսդրական բարեփոխումներ

Հանձնաժողովի առաջնահերթ խնդիրներից է կարգավորման դաշտի բազմակողմանի և ճկուն կանոնակարգումն ու դրա շարունակական կատարելագործման ապահովումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման ու կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Հանձնաժողովը, հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության սահմանադրաիրավական մանդատի իրագործմանն ուղղված խնդիրների առավել համակողմանի և արդյունավետ լուծումների ապահովման, հանրային ծառայություններից օգտվող սպառողների և ոլորտի կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման անհրաժեշտությունից ելնելով, մշակել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» և հարակից օրենքների, այդ թվում՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծեր, որոնք երկրորդ ընթերցմամբ ընդունվել են Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ մտել 2021 թվականի դեկտեմբերի 1-ից:

Նշված օրենքները, ըստ էության, ուղղված են հանձնաժողովի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը (այդ թվում նաև՝ հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների արդյունավետ իրականացմանն ուղղված իրավակարգավորումների ձևավորմանը), էներգետիկայի ոլորտում գործունեության խթանմանն ու դյուրինացմանը, կարգավորման պարտադիր վճար վճարողների շրջանակի՝ հանրային ծառայությունների ոլորտներում կարգավորման ներկայիս քաղաքականությանը համահունչ ձևավորմանը և հանրային ծառայությունները կարգավորող մարմնի ֆինանսավորման մեխանիզմների բարելավմանը: Այսպես.

**«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի մասով.**

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքն ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 25-ին, որով նախանշվել են հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում կարգավորող մարմնի ստեղծման և գործունեության օրենսդրական հիմքերը: Օրենքը հետագայում ենթարկվել է մի շարք վերանայումների, որոնցից առավել ընդգրկունը՝ 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, երբ նորովի արժևորվեցին հանրային ծառայությունների ոլորտում կարգավորող մարմնի դերն ու նշանակությունը՝ հիմքում դնելով ինստիտուցիոնալ, քաղաքական, իրավական և ֆինանսական առումով անկախ մասնագիտացված կարգավորող մարմին ձևավորելուն ուղղված միջազգային առաջավոր փորձը: Նշված փոփոխությունների արդյունքում հանձնաժողովին վերապահվեց ինքնավար մարմնի կարգավիճակ, որն ամրագրվեց նաև գործընթացին հաջորդած «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի փոփոխություններով:

Նշված փոփոխություններն, այդուհանդերձ, չամրագրեցին այն օրենսդրական երաշխիքներն ու կարգավորումները, որոնք պետք է ապահովեին ինքնավար մարմնի կողմից իր առջև դրված խնդիրների համակողմանի և արդյունավետ լուծումները՝ միտված հանրային ծառայություններից օգտվող սպառողների և ոլորտի տնտեսվարող անձանց շահերի հավասարակշռմանը: Առկա օրենսդրական բացերով և խնդրահարույց հարցերով պայմանավորված՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքներով՝

- հստակեցվել են հանձնաժողովի կողմից որոշումների ընդունմանն առնչվող կարգավորումները՝ նախատեսելով նաև գրավոր քվեարկությամբ որոշումների ընդունման հնարավորություն.

- ամրագրվել են հանձնաժողովի իրավական ակտերի բողոքարկման, այդ ընթացքում դրանց հետագա գործողությանն առնչվող հստակ կարգավորումներ, որոնք ուղղված են այդ ակտերի՝ ժամանակին կատարման ուժով իրենց նպատակին ծառայելուն.

- ամրագրվել են հանձնաժողովի (անդամների) գործունեության անկախության երաշխիքներ, հանձնաժողովի անդամների լիազորությունները հստակ ամրագրող կարգավորումներ, հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջների, վերջիններիս պաշտոնավարման և գործունեության դադարման հետ կապված հստակեցումներ.

- հանձնաժողովի նիստերի հրավիրման և անցկացման վերաբերյալ օրենսդրական կարգավորումները համապատասխանեցվել են առկա իրողություններին. մասնավորապես, ամրագրվել է հանձնաժողովի նիստին ինչպես հանձնաժողովի անդամի, այնպես էլ այլ անձանց՝ տեսաձայնային հեռահաղորդակցության կապի միջոցով մասնակցելու հնարավորություն, հստակեցվել են նիստը դնփակ անցկացնելու, նիստի արձանագրման և ձայնագրման, ծանուցումների, հետաձգումների հետ կապված հարցերը և այլն.

- հանձնաժողովի կողմից մոնիթորինգի իրականացման, ինչպես նաև կարգավորվող անձանց կամ սպառողների տարածք մուտք գործելու վերաբերյալ կարգավորումները համապատասխանեցվել են լիազորող նորմի իրավական որոշակիության սկզբունքին.

- նախատեսվել են շահագրգիռ և այլ անձանց պատշաճ ծանուցման ապահովման հետ կապված հստակ և ամբողջական օրենսդրական կարգավորումներ.

- ամրագրվել են իրավասու մարմինների և կարգավորվող անձանց կողմից հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ կարգավորումներ, այդ թվում՝ հստակ ժամկետներ: Համանման պարտավորություն նախատեսվել է նաև հանձնաժողովի համար.

- ամրագրվել է դիմում-բողոքների և հաղորդումների արդյունավետ և համակողմանի քննարկմանն ուղղված հստակ ընթացակարգ.

- նախատեսվել են հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթներով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկմանն ուղղված կարգավորումներ, որոնք հաշվի են առնում կարգավորվող ոլորտներին բնորոշ առանձնահատկությունները, խիստ մասնագիտացված բնույթ կրող հարցերի համակողմանի քննության անհրաժեշտությունը, հանրային

ծառայություններից օգտվող սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռմանը միտված մեխանիզմները և այլն.

- նախատեսվել է հանձնաժողովի որոշումներով իրավախախտման վարույթով պատասխանողի գույքի վրա կիրառված տուգանքի չափով արգելանք դնելու հնարավորությունը.

- հստակեցվել են վարչական վարույթի երկարաձգման, կասեցման, վերսկսման և կարճման օրենսդրությամբ ամրագրված հիմքերը.

- օրենսդրական հստակեցում են ստացել հանձնաժողովի կողմից իրավախախտման փաստի արձանագրման դեպքում մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու ու դրանից բխող գործողություններ կատարելու (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն) կամ այդ մասին հանձնարարականներ տալու հետ կապված իրավասությունները.

- ներդրվել է նոր կարգավորում, համաձայն որի՝ տուգանք կիրառելու մասին հանձնաժողովի որոշումը մինչև դրանում նշված ժամկետում կատարվելու դեպքում համարվում է պատշաճ կատարված տուգանքի 75 տոկոսը վճարելու դեպքում.

- սահմանվել է հանձնաժողովի պահպանման ծախսերի մեծությունն անհրաժեշտ չափով ավելացնելու հնարավորություն՝ համապատասխանաբար պետական բյուջե վճարվող հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների ավելացմամբ: Փոփոխությունը հնարավորություն կտա հանձնաժողովին մրցույթի միջոցով ներգրավելու անկախ աուդիտորների, ովքեր կարգավորվող ընկերություններում իրականացված աուդիտի համար կվճարվեն հանձնաժողովի կողմից և հաշվետու կլինեն վերջինիս՝ դրանով իսկ բացառելով աուդիտի իրականացման ընթացքում կարգավորվող անձանց միջամտությունը կամ ներգործությունը: Բացի այդ, անհրաժեշտ է, որպեսզի հանձնաժողովը գնահատի էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում օպերատորների ցանցերի հուսալիության և անվտանգության ապահովման մակարդակը, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ապահովման ուղղությամբ որոշակի պարտավորություններ սահմանելու նպատակով ենթակառուցվածքների զարգացման համար պահանջվող ներդրումներն ու դրանց վերադարձելիությունը, ինչի իրականացումը ևս պահանջում է նեղ մասնագիտացում ունեցող անձանց (աուդիտ, վերլուծություն) ներգրավում և, չնայած «էլեկտրոնային հաղորդակցության մասին»

օրենքով հանձնաժողովին ուսումնասիրություններ և աուդիտ իրականացնելու գործառույթի սահմանմանը, համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հանձնաժողովն այն պատվիրակել է օպերատորներին: Հետևաբար, առաջարկվող փոփոխությունը թույլ կտա ներգրավելու համապատասխան փորձառություն ունեցող միջազգային կամ տեղական փորձագետների, ինչպես նաև մասնագիտացված կազմակերպություններ:

**«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի մասով.**

▪ Էներգետիկայի բնագավառում ներդրումների ներգրավումը խթանելու, ներդրողների համար գործունեության որոշակի երաշխիքներ ապահովելու, կարգավորման կանխատեսելիությունը բարձրացնելու, սպառողների սակագների վրա հնարավոր բացասական ազդեցությունները բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերին համահունչ մեղմելու, ինչպես նաև լիցենզավորված անձանց մոտ ծախսերի նվազեցման և գործունեության արդյունավետության խթաններ ստեղծելու նպատակով առանձին դեպքերում անհրաժեշտություն է առաջանում կիրառել հաստատուն (առավելագույն) սակագնային մեխանիզմներ, ինչից ելնելով՝ օրենքը լրացվել է նոր դրույթով, որով հստակեցվում են էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց համար առանձին դեպքերում հաստատուն (առավելագույն) սակագնային մեխանիզմների կիրառման հետ կապված հանձնաժողովի իրավասությունները.

▪ օրենքում ամրագրվել է դրույթ, համաձայն որի՝ սահմանված դեպքերում հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը (լրիվ կամ մասնակի) պետական բյուջե փոխացելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է և (կամ) դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, նախատեսված գումարի՝ պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը: Միաժամանակ, օրենքում որպես լիցենզիայի գործողության



կասեցման հիմք ամրագրվել է նաև հանձնաժողովի հաստատած կարգին համապատասխան՝ անձի կողմից երաշխիք չներկայացնելու դեպքը.

- պարզեցվել է օրենքի 27-րդ հոդվածով ամրագրված՝ լիցենզիա ունեցող անձի լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման գործարքների համաձայնեցման գործընթացը.

- օրենքը չէր նախատեսում կարգավորում, երբ արտադրության լիցենզիա ստանալու, դրանում կառուցման (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար հիմք հանդիսացած անհրաժեշտ իրավունքը դադարելու դեպքում (այդ թվում՝ նշված իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու արդյունքում) հանձնաժողովն իրավասու լինի ուժը կորցրած ճանաչել տրամադրված լիցենզիան (նման կարգավորում առկա էր միայն ջրօգտագործման թույլտվության մասով), ինչն ամրագրվել է օրենքով:

***«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի մասով.***

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում վարչարարության պարզեցման և գործարար միջավայրի բարելավման նկատառումներով հանձնաժողովը մշակել և սահմանված կարգով հետագա քննարկման է ներկայացրել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը 2021 թվականի նոյեմբերի 18-ին ընդունվել է Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ մտել 2021 թվականի դեկտեմբերի 1-ից: Մասնավորապես, օրենսդրական փոփոխությունները վերաբերում են կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցման կարգավորումների պարզեցմանը և հստակեցմանը, ինչպես նաև կարգավորվող անձի կողմից կատարված իրավախախտման նկատմամբ նախատեսված տույժերի կիրառման համաչափության մեխանիզմի ապահովմանը (հաշվի է առնվում կատարված իրավախախտման բնույթը, իրավախախտի շրջանառության ծավալները, ինչպես նաև որպես տույժի կիրառման տեսակ նախատեսվել է նաև նախազգուշացումը):

**«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին»  
օրենքի մասով.**

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքն ընդունվել էր 2005 թվականին, որի իմաստով կարգավորման պարտադիր վճար վճարողներ էին համարվում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, որոնց համար հանձնաժողովը սահմանում էր կարգավորվող սակագներ: Ընդ որում, նշված մոտեցման ամրագրումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ օրենքի մշակման ժամանակ հանձնաժողովի կողմից հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց համար հիմնականում սահմանվում էին սակագներ, և բացառություն էր կազմում հեռահաղորդակցության բնագավառը, որը նոր էր անցել հանձնաժողովի կարգավորման դաշտ, և այդ ընթացքում ամրակցված կապի ծառայությունների սակագները նույնպես ամբողջությամբ ենթակա էին կարգավորման: Միայն բջջային կապի շուկայում էին ծառայությունների գները ձևավորվում մրցակցության պայմաններում:

Այնուհետև, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում կատարված լրացումներով հանրային ծառայությունները կարգավորող ոլորտում ներառվել են փոստային կապի բնագավառը՝ ունիվերսալ ծառայությունների սակագների մասով, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության անցկացման բնագավառը՝ միայն սակագների մասով, երկաթուղային տրանսպորտի բնագավառը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների սահմանման մասով:

Նախընթաց տարիներին հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում տեղի են ունեցել զգալի զարգացումներ, ի հետևանք որոնց ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ կարգավորվող ոչ բոլոր անձանց համար էր հանձնաժողովը սահմանում (սահմանելու) սակագներ և, արդյունքում, վերջիններս դուրս էին մնում կարգավորման պարտադիր վճար վճարողների շրջանակից՝ թեև նշված անձանց մասով հանձնաժողովն իրականացնում էր համապատասխան գործառույթներ: Մասնավորապես, հեռահաղորդակցության բնագավառում հանձնաժողովն իրականացնում է ամբողջական կարգավորում, սակայն նշված շուկայում առկա մրցակցության պայմաններում սակագների կարգավորման անհրաժեշտությունը

բացակայում է և գրեթե չի իրականացվում: Բացի այդ, «Էներգետիկայի մասին» օրենքում կատարված փոփոխությունների շրջանակում առաջիկա տարիներին նախատեսվում է էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջությամբ կարգավորվող մոդելից աստիճանական անցում մրցակցային մոդելի, որի պարագայում ի հայտ կգան չկարգավորվող գներով գործող շուկայի նոր մասնակիցներ: Արդյունքում, հանձնաժողովի ռեսուրսներն օգտագործվում էին նաև սակագնային կարգավորումից դուրս գտնվող տնտեսվարողների մասով, մինչդեռ վերջիններս նախկինում գործող օրենքի շրջանակում չէին վճարում հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար:

Միևնույն ժամանակ, վճարված կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունը և դրույքաչափերը նախկին օրենքով հաշվարկվում և սահմանվում էին հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա պահպանման ծախսերի նախահաշվի հիման վրա, որը հաստատվում էր բյուջետային գործընթացի համար սահմանված կարգով և ժամկետներում: Արդյունքում, երբ հաշվարկային տարվա ընթացքում ի հայտ էր գալիս կապիտալ ծախսեր կատարելու անհրաժեշտություն կամ կարգավորվող բնագավառներում կարգավորման գործառույթների իրագործման կամ կատարելագործման նպատակով լրացուցիչ ֆինանսավորում պահանջող աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն, հանձնաժողովը կաշկանդված էր նախորդ տարում արդեն իսկ հաստատված կարգավորման պարտադիր վճարները ընթացիկ տարում վերանայելու և վճարողների համար նոր դրույքաչափեր սահմանելու՝ օրենքով գործող սահմանափակումներով:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» նոր օրենքով համապատասխան կարգավորումը դարձել է համահունչ ներկայիս և առաջիկայում նախատեսվող՝ հանրային ծառայությունների ոլորտներում կարգավորման քաղաքականությանը:

Մասնավորապես, նոր օրենքով հստակեցվել են կարգավորման պարտադիր վճար վճարողներ համարվելու չափանիշները և դրանց շրջանակը, բարելավվել է հանձնաժողովի գործունեության ֆինանսավորման մեխանիզմը, հնարավորություն է ստեղծվել հաշվետու տարվա ընթացքում կարիքն առաջանալու դեպքերում համապատասխան փոփոխություններ կատարել կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկում և պարտադիր վճարների դրույքաչափերում:

Այսպիսով, հաշվի առնելով 2021 թվականի դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» նոր օրենքի պահանջները՝ հանձնաժողովը հաստատել է 2022 թվականի համար կարգավորման պարտադիր վճար վճարողների անվանական կազմը և հաշվարկել կարգավորման պարտադիր վճարների 2022 թվականի դրույքաչափերը: Հարկ է նշել, որ նոր օրենքով հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկում ընդգրկվում են հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում գործունեություն իրականացնող անձինք, որոնց հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա կարգավորվող գործունեությունից հասույթը գերազանցում է 500 մլն դրամը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Արդյունքում, նոր օրենքի համաձայն՝ պարտադիր վճար վճարողների ցանկում ներառվել են նաև «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի ընկերությունները:

Բացի այդ, նոր օրենքի համաձայն՝ կարգավորման պարտադիր վճարների 2022 թվականի տարեկան դրույքաչափերի հաշվարկման համար հիմք է ընդունվել կարգավորման վճար վճարողների կարգավորվող ոլորտում գործունեության՝ հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա իրացման շրջանառությունը՝ նախկին օրենքով նախատեսված սակագների հաշվարկում կանխատեսված մեծության փոխարեն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի №48-Լ որոշման №2 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը, որով նախատեսվել է լրամշակել «Էներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքները, ինչպես նաև նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կատարելագործել ինքնավար էներգաարտադրողների փոխհոսքերի իրականացման գործող մեխանիզմները՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս արտադրել և սպառել էլեկտրաէներգետիկական համակարգի տարբեր հաշվառման կետերում, ձևավորել խմբեր, դրանցում ներառելով բնակիչների և կազմակերպություններ:

Ռազմավարական ծրագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ հանձնաժողովի մասնակցությամբ մշակվել և Ազգային ժողովի կողմից 2021 թվականին

ընդունվել են «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքները: Նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ ինքնավար էներգաարտադրության մասով ուժը կորցրած է ճանաչվել «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքի հավելվածը (ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև փոխհոսքերի կարգը), իսկ «Էներգետիկայի մասին» օրենքը լրացվել է «Ինքնավար էներգաարտադրությունը և միկրոէներգաարտադրությունը» գլխով, որով սահմանվել են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով նախատեսված բարեփոխումները:

Այսպիսով, նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ ինքնավար էներգաարտադրության գործընթացի կազմակերպման, էլեկտրական էներգիայի փոխհոսքերի հաշվառման և փոխհոսքերի գործընթացից բխող հատուցման հարաբերությունների կարգավորումը «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքի գործողության տիրույթից տեղափոխվել է «Էներգետիկայի մասին» օրենքի գործողության տիրույթ:

Հարկ է նշել, որ «Էներգետիկայի մասին» օրենքում լրացված՝ «Ինքնավար էներգաարտադրությունը և միկրոէներգաարտադրությունը» գլխով նախատեսված է հիմնովին վերանայել ինքնավար էներգաարտադրության գործընթացի կազմակերպման, էլեկտրական էներգիայի փոխհոսքերի հաշվառման և հատուցման հարաբերությունները, օրենքի լրամշակմամբ սահմանվել են ինքնավար էներգաարտադրողի տեղակայանքների դրվածքային հզորության նոր սահմանաչափեր, նախատեսվել է ինքնավար խմբի ստեղծման հնարավորություն՝ ինքնավար խմբի համար սահմանված դրվածքային հզորության համապատասխան սահմանաչափերով, ինչպես նաև նախատեսվել է էլեկտրական էներգիան էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում արտադրելու և տարբեր կետերում սպառելու հնարավորություն:

Բացի այդ, «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-261-Ն օրենքով սահմանվել են նաև էլեկտրական էներգիայի

արտադրության գործունեության լիցենզավորմանը և գնման երաշխիքի ժամկետներին առնչվող լրացուցիչ կարգավորումներ, ինչպես նաև մինչև 150 կՎտ դրվածքային հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց համար նախատեսվել է միկրոէներգաարտադրողի կարգավիճակ, որոնց տրվել է էլեկտրական էներգիա արտադրող տեղակայանք կառուցելու (վերակառուցելու), էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում էլեկտրական էներգիա արտադրելու և նույն կամ տարբեր կետերում սպառելու, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներին վաճառելու իրավունք:

## **2. Էներգետիկայի բնագավառ**

### ***2.1 Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ***

Հանձնաժողովը 2021 թվականին շարունակել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի կատարելագործման աշխատանքները, որում կատարված փոփոխություններով՝

- փոխվել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգով ամրագրված՝ լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում այդ մասին լիցենզավորված անձի կողմից հանձնաժողովին տեղեկացնելու ժամկետը.

- գործնականում հանդիպող տարընկալումներից խուսափելու և իրավական որոշակիության ապահովման նպատակով հստակ ամրագրվել է, որ կարգով նախատեսված հայտը (դիմումը) ուսումնասիրության չընդունվելուց կամ մերժվելուց հետո կրկին ներկայացման դեպքում այն համարվում է նոր հայտ (նոր դիմում).

- վերանայվել է արևային էներգետիկ ռեսուրսներ օգտագործող էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրման գումարային հզորությունների սահմանաչափը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության առաջարկի հիման վրա ամրագրվել է համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին արևային

էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաների տրամադրման 15 ՄՎտ գումարային հզորությամբ նոր սահմանաչափ.

- ամրագրվել է հնարավորություն՝ բնական գազի ներկրման ու արտահանման լիցենզիաների ստացման հայտի և դրան կից փաստաթղթերի ներկայացումը, հայտի մերժումը (ուսումնասիրության չընդունումը), այդ լիցենզիայի տրամադրումը, դրա ժամկետի երկարաձգումը, վերաձևակերպումը, փոփոխությունը, գործողության կասեցումը և դադարեցումը կարգով սահմանված ընթացակարգով և ժամկետներում կատարելու նաև «Միասնական հայտ» էլեկտրոնային համակարգի միջոցով.

- հստակեցվել են լիցենզիայով ամրագրված կայանի կառուցման ժամանակահատվածի երկարաձգման վերաբերյալ առկա կարգավորումները, ինչպես նաև նախատեսվել է հնարավորություն՝ կառուցման ժամանակահատվածի երկարաձգման դեպքում միաժամանակ նույն ժամկետի չափով նաև արտադրության ժամանակահատվածի ճշգրտման համար.

- ամրագրվել է հայտատուի հնարավորությունը կայանի կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի ստացման համար, առկայության դեպքում, գործարար ծրագրի փոխարեն ներկայացնել կայանի կառուցման նախագիծ.

- հողմային և վերականգնվող էներգետիկ այլ ռեսուրսներ օգտագործող էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների՝ առանց գումարային հզորության սահմանափակման տրամադրման ժամկետները երկարաձգվել են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը.

- որոշակիորեն պարզեցվել է կարգով ամրագրված ֆորս մաժոր հասկացությունը:

**Կատարվել են էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգի լրամշակման աշխատանքներ, մասնավորապես՝**

- հստակեցվել և լրամշակվել են հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջները.

- լիցենզավորված անձանց գործունեության խթանմանը նպաստելու համար հանվել է նաև մինչև քսան քառակուսի մետր մակերես ունեցող շենքերի, շինությունների կամ հողատարածքների մասով համաձայնեցման պահանջը, ինչպես նաև սահմանվել է, որ լիցենզավորված անձի բանկային հաշիվների և դրամական միջոցների վերաբերյալ գործարքները կարգի իմաստով համաձայնեցման ենթակա չեն.

- լրամշակվել և պարզեցվել է հայտն ուսումնասիրության ընդունելու ընթացակարգը.

- որոշ դեպքերում լիցենզավորված անձի գույքի չափագրման, քարտեզագրման և այլ խնդիրներով պայմանավորված խոչընդոտների առկայությունը նկատի ունենալով՝ հստակեցվել է հիմնավորված դիմումի հիման վրա գործարքի կնքման՝ հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետի երկարաձգման ընթացակարգը.

- իրավական որոշակիության ապահովման և կարգով սահմանված պահանջների՝ առավել հասցեական ու արդյունավետ իրացման նպատակով կարգը լրացվել է գործարքին համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշման պայմանների՝ լիցենզավորված անձի կողմից կատարման գնահատմանն առնչվող հստակ կարգավորմամբ.

- ամրագրվել է արդեն իսկ համաձայնեցված գործարքի կնքումից հետո, դրանում հանձնաժողովի համապատասխան որոշմամբ ամրագրված գործարքի էական և այլ պայմաններին առնչվող փոփոխություն կատարվելու դեպքում, այդ մասով նույնպես հանձնաժողով դիմելու և համաձայնեցնելու պահանջ.

- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման համատեքստում կարգը լրացվել է մեկ այլ նոր իրավանորմով ևս, ըստ որի՝ արգելվում է գործարքի կնքումը դրա կնքմանը համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմաններին (դրույթներին) չհամապատասխանելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի №48-Լ որոշմամբ հավանության արժանացած և 2021 թվականի նոյեմբերի 18-ի №1902-Լ որոշմամբ հաստատված, համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված միջոցառումների



շրջանակում 2021 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմանը, հարևան երկրների էլեկտրաէներգետիկական համակարգերին ինտեգրվելու հնարավորությունների ստեղծմանը և էլեկտրական էներգիայի առևտրի զարգացմանն ուղղված իրավական ակտերի մշակման և կատարելագործման ուղղությամբ:

Մասնավորապես, էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի աստիճանական գործարկման ապահովման նպատակով հանձնաժողովը նախաձեռնել է համապատասխան փոփոխություններ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններում և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի պայմանագրի (օֆերտա) օրինակելի ձևում: Նշված փոփոխությունները նպատակ ունեն ապահովել հարթ անցում շուկայի գործող կարգավորվող մոդելից՝ մրցակցայինի, միաժամանակ, հաշվի առնելով նաև 2021 թվականի փետրվարի մեկից շուկայի կառավարման ծրագրի փորձնական գործարկման արդյունքում արձանագրված խնդիրները և այդ համատեքստում շուկայի մեծածախ կանոնների ու պայմանագրի օրինակելի ձևի շուրջ տեղի ունեցած լրացուցիչ քննարկումները: Առաջարկվող լուծումներն ուղղված են նաև մրցակցային շուկայում մասնակիցների գործունեության հետ կապված հնարավոր ռիսկերը առաջին տարվա ընթացքում մեղմելուն, որի շրջանակում նախատեսվում են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունների լրացուցիչ անցումային կարգավորումներ:

Նույն գործընթացի շրջանակում լրամշակվել են նաև էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները, հաղորդման ցանցային կանոնները, մանրածախ շուկայի առևտրային կանոնները, էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման, սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման, ինչպես նաև կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման մասին պայմանագրերի օրինակելի ձևերը:

Միաժամանակ, լրամշակվել են էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման և վերանայման կարգը, սակագների հաշվարկման մեթոդիկաները՝ հստակեցնելով էներգետիկայի բնագավառում սակագնային կարգավորման ենթակա

գործունեության ոլորտները և ամրագրելով այլ դրույթներ՝ համահունչ «Էներգետիկայի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների և այլ իրավական ակտերի պահանջներին, նախատեսել նաև հաշվեկշռման ծառայության համար համապատասխան կարգավորումները:

## **2.2. Սակագնային քաղաքականություն**

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի ու լիցենզիայի պայմանների պահանջները և 2022 թվականի փետրվարի 1-ից մինչև 2023 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման և արտահանման հաշվեկշիռը, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև ստորագրվող համաձայնագրով նախատեսված՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» կայանի նկատմամբ պարտավորությունների կատարման, Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման և սպասարկման ծախսերի իրականացման, արտարժույթների փոխարժեքների փոփոխության, բնական գազի փաստացի կալորիականության հաշվառման մեխանիզմների ներդրման հանգամանքները, 2021 թվականին իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման անհրաժեշտությունը և էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդող մի շարք այլ գործոնների փոփոխությունները՝ հանձնաժողովը 2021 թվականի տարեվերջին վերահաշվարկել է արտադրող խոշոր կայանների համար էլեկտրական էներգիայի արտադրության, ծառայություններ մատուցողների համար էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, շուկայի օպերատորի,

հաշվեկշռման (նվազագույն և առավելագույն) և էլեկտրական էներգիայի բաշխման ծառայությունների մատուցման սակագները, ինչպես նաև սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները: Ընդ որում, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելի պահանջներին համապատասխան՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների համար սահմանվել են միադրույք սակագներ, իսկ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «ԱՐՄՓԱՌԻԵՐ», «ԳԱԶՊՐՈՍ ԱՐՄԵՆԻԱ» («Հրազդան-5» կայան) փակ բաժնետիրական ընկերությունների և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար՝ երկդրույք սակագներ: Արդյունքում, 2022 թվականի փետրվարի 1-ից սոցիալապես անապահով ընտանիքների համար գործող սակագները մնացել են անփոփոխ, իսկ ամսական մինչև 200 կՎտժ սպառում ունեցող բնակիչ-բաժանորդների համար սակագները բարձրացել են 1.5 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն), ամսական 201-400 կՎտժ սպառում ունեցող բնակիչ-բաժանորդների համար՝ 3.5 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն), ամսական 401 և ավելի կՎտժ սպառում ունեցող բնակիչ-բաժանորդների և մնացած սպառողների համար՝ 5.5 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):

Հատկանշական է 2021 թվականի դեկտեմբերի 11-ից «ԱՐՄՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կառուցված նոր 254 ՄՎտ հզորությամբ առավել արդյունավետ ջերմային էլեկտրակայանի մուտքը էլեկտրաէներգետիկական համակարգ և վերջինից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների սահմանումը, ինչը դրական ազդեցություն է ունեցել սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների վրա:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2021 թվականին՝ ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվել են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները և հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայվել ու 2021 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել 20 արևային էլեկտրակայաններից, 1 հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» փակ բաժնետիրական ընկերության կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և թվով 178 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա, ըստ գործող կարգի, սահմանվել են 1 փոքր հիդրոէլեկտրակայանից, 11 նորակառույց արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն՝ 2022 թվականի փետրվարի 1-ից «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքային ժամկետը լրացած փոքր հիդրոէլեկտրակայանները համարվում են մրցակցային պայմաններով գործող արտադրողներ: Վերջիններս նշված ամսաթվից գործելու են լիարժեք մրցակցության պայմաններում և դրանցից առաքվող էլեկտրական էներգիայի համար հանձնաժողովը սակագին չի սահմանելու:

Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են 2019 թվականին հանձնաժողովի որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների իմաստով պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի շրջանակում գործող կայանների և էլեկտրաէներգետիկական շուկայի անցումային կարգավորումների համաձայն սակագնային կարգավորման ենթակա «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության 2022 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների չափաքանակները:

### **2.3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրեր**

Հանձնաժողովը 2021 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է էլեկտրական էներգիայի արտադրության 7 լիցենզիա, այդ թվում՝ 0,6 ՄՎտ տեղակայվող հզորությամբ մեկ համայնքային ոչ առևտրային կազմակերպության, էլեկտրական էներգիայի մատակարարման՝ 3 լիցենզիա, քննարկվել են լիցենզիաների վերաձևակերպման՝ 18, լիցենզիաներով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածների երկարաձգման՝ 57, և լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգման 5 հայտեր:

2021 թվականի դեկտեմբերին արտադրության փուլ է անցել «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող 254 ՄՎտ տեղակայված հզորությամբ էլեկտրակայանը: Այդ նույն ընթացքում էլեկտրական էներգիայի արտադրության փուլ են անցել նաև թվով 14 արևային էլեկտրակայաններ,

որի արդյունքում համակարգ է մուտք գործել 40,8 ՄՎտ գումարային հզորություն, ինչը դրական ազդակ է՝ հասնելու էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասով թիրախային ցուցանիշներին:

Հանձնաժողովի կողմից առևտրային կանոններին համապատասխան փորձաքննություն են անցել և գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 313 պայմանագրեր:

#### **2.4. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ**

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքները կարևորվում են սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի որոշման, ներդրումների արդյունավետության գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում է նույն ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

2021 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Հաշվարկային կենտրոն» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունները:

Բացի այդ, «Հայկական ատոմային էլեկտրակայան», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո

Կասկադ», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունները ներդրումներ են իրականացրել նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ վերջինիս երաշխիքով միջազգային ֆինանսական կառույցներից ստացված վարկային ծրագրերի շրջանակում:

Իրականացվող ներդրումային ծրագրերն ուղղված են մի շարք խնդիրների լուծմանն ու կարգավորմանը: Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերն ուղղված են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը: «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրությանը և շինարարական աշխատանքների ծավալի գնահատմանը, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավմանը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրն ուղղված է «Սևան-Հրազդան» կասկադի վերականգնմանը՝ հետագա անվտանգ, արդյունավետ և հուսալի շահագործման նպատակով, «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ծրագիրը՝ երկֆակտորային նույնականացման ու սերվերային համակարգերի ներդրմանը և էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի տեխնիկական աջակցության արտոնագրերի ու ծրագրային մոդուլների ձեռքբերմանը: «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է կայանի շահագործման ժամկետի երկարաձգմանը, ինչն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N°48-Լ որոշմամբ հավանության արժանացած և 2021 թվականի նոյեմբերի 18-ի N°1902-Լ որոշմամբ հաստատված, համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040

թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի մասով:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով: Անհատապես ուսումնասիրվում է սպառողների կողմից սպասարկման որակի ցուցանիշներին (ընդհատումներ, էլեկտրական էներգիայի լարման թույլատրելի սահմաններից շեղումներ) վերաբերող յուրաքանչյուր բողոք, և բարձրացված հարցի լուծմանն ուղղությամբ հասցեական աշխատանքները ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

Կարգավորվող ընկերությունների կողմից իրականացված ներդրումային ծրագրերի շրջանակում՝ 2020 և 2021 թվականներին ավարտված և շահագործման հանձնված ներդրումների ծավալը կազմել է ավելի քան 324 մլրդ դրամ (ներկայացված է սույն հաշվետվության N1 հավելվածում):

Ներդրումային գործունեության վերլուծության արդյունավետության բարձրացման, ներդրումների հավաստիության և հիմնավորվածության ստուգման առավել արդյունավետ մեթոդներ և գործիքներ օգտագործելու նպատակով հանձնաժողովը 2021 թվականին երրորդ անգամ նախաձեռնել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ներդրումային գործունեության աուդիտի իրականացում, որը նպատակ ուներ՝

- 1) բարձրացնել հանրության և շահագրգիռ կողմերի մոտ ընկերության ներդրումային գործունեության նկատմամբ օբյեկտիվ և հիմնավոր գնահատականի ձևավորման նկատմամբ վստահությունը,
- 2) բարձրացնել սակագների սահմանման և վերանայման գործընթացի հիմնավորվածությունը,
- 3) դրական ազդեցություն ունենալ կարգավորվող սակագների վրա,
- 4) բացառել սակագների ձևավորման գործընթացում հաշվի առնվող գործոնների նկատմամբ կարգավորվող անձանց միջամտությունը կամ ներգործությունը:

2021 թվականին հանձնաժողովի համապատասխան որոշմամբ հաստատվել են աուդիտի տեխնիկական առաջադրանքը և ժամանակացույցը, աուդիտորական ծառայություններ մատուցողի ընտրության արդյունքում հաղթել է «Գրանթ Թորնթոն» աուդիտորական կազմակերպությունը, որի վերջնական արդյունքները կամփոփվեն և հաշվի կառնվեն 2022 թվականի սակագները սահմանելիս:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների ինտերնետային կայքերում:

2021 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն կարգավորվող անձանց գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, իրականացրել է կարգավորվող անձանց գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Մոնիթորինգի արդյունքում կազմված վերլուծական տեղեկանքները հրապարակվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.psrc.am](http://www.psrc.am)):

## **2.5 Վերականգնվող էներգետիկա**

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործել են՝

- 189 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 20-ը գտնվել են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 384 ՄՎտ, իսկ կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններինը՝ շուրջ 46 ՄՎտ: Ըստ այդմ, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից



հետո հանրապետությունում կգործեն 209 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 430 ՄՎտ գումարային հզորությամբ.

- 26 արևային էլեկտրակայաններ, ևս 37-ը գտնվել են կառուցման փուլում: Գործող արևային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 51 ՄՎտ, իսկ կառուցվող արևային էլեկտրակայաններինը՝ շուրջ 215 ՄՎտ: Ըստ այդմ, կառուցվող էլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 63 արևային էլեկտրակայաններ՝ 266 ՄՎտ գումարային հզորությամբ.
- 4 հողմային էլեկտրակայաններ, ևս 1-ը գտնվել է կառուցման փուլում: Գործող հողմային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 4,2 ՄՎտ, իսկ կառուցվող հողմային էլեկտրակայանինը՝ 4 ՄՎտ: <sup>1</sup>

2021 թվականին փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների կիրառմամբ գործող կայաններից առաքված էլեկտրական էներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի նկատմամբ կազմել է 12.9%, իսկ ներքին շուկայի բավարարման նպատակով բաշխման ցանց մուտք գործած էլեկտրական էներգիայի նկատմամբ՝ 15.3%:

Գործող և գործարկման ենթակա փոքր հիդրոէլեկտրակայանների, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող այլ կայանների ամփոփ ցուցանիշները, ինչպես նաև հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիաների համաձայն կառուցման և արտադրության փուլերում գտնվող հիդրոէլեկտրակայանների հզորությունների և վերջիններիս կողմից էլեկտրական էներգիայի արտադրության ծավալների մասին տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշվետվության NN 2-7-րդ հավելվածներում, ինչպես նաև հրապարակված է հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առումով տարեցտարի առավել նշանակալի է դառնում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի գործընթացը: Նշված

---

<sup>1</sup> «Ձող Ուինդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի վարչական տարածքում (գյուղ Սոթք) կառուցված 1320 կՎտ տեղակայված հզորությամբ «Ձող Ուինդ» հողմային էլեկտրակայանը պատերազմի արդյունքում հայտնվել է Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո:

գործընթացը թույլ է տալիս էլեկտրական էներգիայի սեփական արտադրության միջոցով բարելավել և համահարթեցնել սպառման ռեժիմներն ինչպես կենցաղային մակարդակում՝ նվազեցնելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող բնակիչ-սպառողների էլեկտրական էներգիայի գծով ծախսերը, այնպես և գործարար միջավայրում՝ նպաստելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող կազմակերպությունների ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը:

2021 թվականի տարեվերջի դրությամբ բաշխման ցանցին միացված ինքնավար էներգաարտադրողների քանակը կազմել է 7000, իսկ վերջիններիս համակարգերի ընդհանուր հզորությունը՝ մոտ 136 ՄՎտ:

Նույն ժամանակահատվածում համապատասխան տեխնիկական պայմաններ ստացած և փոխհոսքերի նպատակով համակարգին միացման ընթացքում գտնվող սպառողների քանակը կազմել է 518, որոնց համակարգերի պոտենցիալ հզորությունը կազմել է 11.5 ՄՎտ:

### **3. Զրային ոլորտ**

#### ***3.1. Իրավական ակտերի բարեփոխումներ***

«Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության, նրա կողմից հիմնադրված «Վեոլիա Զուր» փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության կառավարության (ի դեմս ջրային կոմիտեի) միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված վարձակալության պայմանագրի մնացած 10 տարիների (2022-2031 թվականներ) ընթացքում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների կտրուկ տատանումները չեզոքացնելու և սպառողների համար հնարավորինս կայուն սակագնային քաղաքականություն ապահովելու (այդ թվում՝ սոցիալապես անապահով համարվող ընտանիքների համար հնարավորինս նվազ սակագներ սահմանելու) նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպվել են քննարկումներ, որոնց արդյունքներով նշված նպատակների իրականացման համար փոխադարձ ընդունելի տարբերակ է համարվել վարձակալության պայմանագրի առաջիկա 10 տարիների կտրվածքով սակագների համահարթեցումը՝ առանց վարձակալական վճարի 10 տարվա գումարային մեծության

նվազեցման: Վարձակալության պայմանագրում և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի պայմաններում փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման նպատակով հանձնաժողովի, ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից մշակվել և այնուհետև վարձակալության պայմանագրի կողմերի միջև 2021 թվականի նոյեմբերի 10-ին ստորագրվել է վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին №24 համաձայնագիրը:

Ջուգահեռաբար, բնական գազի և էլեկտրական էներգիայի օրինակով քննարկվել է նաև սոցիալապես անապահով ընտանիքների համար խմելու ջրի ոլորտում նույնպես հնարավորինս նվազ սակագներ սահմանելու հնարավորությունը, որի առնչությամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի №1122-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի հանրապետության կառավարության 2021 նոյեմբերի 18-ի №1880-Ն որոշումը:

Արդյունքում, հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 23-ի №400Ա որոշմամբ համապատասխան փոփոխություններ են կատարվել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրված լիցենզիայի պայմաններում՝ վարձակալության պայմանագրի առաջիկա 10 տարիների համար ապահովելով հնարավորինս կայուն սակագնային քաղաքականություն և հնարավորություն ընձեռելով սոցիալապես անապահով ընտանիքների համար սահմանել առավել ցածր սակագներ:

Բացի այդ, հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած տեղեկատվությունը, 2021 թվականին ջրային կոմիտեի հետ համատեղ քննարկումների արդյունքում սկսվել է մի շարք համայնքների բնակիչների՝ պարզեցված կարգով ընկերության բաժանորդ դառնալու գործընթացը: Մասնավորապես, այն բնակիչների, որոնց սպառման համակարգերը պատմականորեն միացած են ջրային համակարգին և որոնք օգտվում են խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման ծառայություններից, սակայն տարբեր պատճառներով չեն հանդիսանում մատակարարի բաժանորդ՝ նաև այն պատճառով, որ վարձակալության պայմանագրի շրջանակում պատշաճ կարգով բաժանորդների տվյալները չեն հանձնվել մատակարարին: Նշված ապօրինի միացումները հիմնականում Հայաստանի

Հանրապետության մարզերում են և մերձայրաքաղաքային ջրատարներից, որոնց հետևանքով չհաշվառվող ջրի օգտագործումը ջրասակավության շրջանում հանգեցնում է Երևան քաղաք մղվող խմելու ջրաքանակի նվազման: Քանի որ քննարկվող դեպքերը բազմաթիվ են, և ջրային համակարգում չհաշվառվող ջրի քանակների նվազեցման արդյունքում կավելանա մանրածախ ջրամատակարարման ծավալը, որն իր հերթին դրական ազդեցություն կունենա սպառողներին մատուցվող ծառայությունների սակագների վրա, նշված բնակիչները հանձնաժողովի անհատական որոշումների հիման վրա կդառնան մատակարար կազմակերպության բաժանորդ՝ առանց նոր միացման ընթացակարգի: Գործընթացը կշարունակվի նաև 2022 թվականին:

### **3.2. Սակագնային քաղաքականություն**

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը, համաձայն իրեն տրամադրված լիցենզիայի պայմանների, 2021 թվականի օգոստոսին վարձակալության 6-րդ պայմանագրային տարվա (2022 թվական) համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտ է ներկայացրել հանձնաժողով՝ բաժանորդներին մատուցվող ծառայությունների սակագների գումարային մեծությունը յուրաքանչյուր խորանարդ մետրի համար առաջարկելով սահմանել 223.7 դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը): Համաձայն սակագների ճշգրտման մեխանիզմների՝ սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են ճշգրտման՝ հաշվի առնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների փոփոխությունը, սղաճը, ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունը, ինչպես նաև ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործելուց և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցումը:

Հաշվի առնելով սակագների վրա ազդող վերը թվարկված գործոնները, հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 23-ի №400Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի պայմաններում կատարված փոփոխությունները և մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ հանձնաժողովն իրականացվել է 2022 թվականի ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներ և ընդունել 2021 թվականի նոյեմբերի 30-ի №405Ն որոշումը,

համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի №1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին ծառայությունների մատուցման սակագները մնացել են անփոփոխ՝ գումարային 180 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), իսկ մյուս բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գումարային սակագինը սահմանվել է 200.47 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):

Միաժամանակ, ճշգրտվել են ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների ու «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագները:

### ***3.3. Մոնիթորինգ և ջրամատակարարման գրաֆիկների համաձայնեցում***

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտի ուսումնասիրության շրջանակում, ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով հանձնաժողովի, ջրային կոմիտեի և սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ 2021 թվականին ևս իրականացվել է մոնիթորինգ՝ հայտնաբերելու փաստացի մատակարարվող խմելու ջրի չհաշվառվող ծավալները: Մոնիթորինգն իրականացվել է երկու փուլով՝ Երևան քաղաքում և այնուհետև՝ մարզերի սպասարկման տարածքում:

Մոնիթորինգի շրջանակում ձևավորված աշխատանքային խմբերը Երևանի և մարզերի սպասարկման տարածքներում այցելել և ուսումնասիրություն են իրականացրել 1944 սպառողների մոտ և արձանագրել լրացուցիչ ջրաքանակ հաշվարկած թվով 433 խախտում: Մոնիթորինգի արդյունքում ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են հետևյալ մոտեցումով.

1. Զրոյական սպառում ունեցող սպառողների մոտ՝ մոնիթորինգի արդյունքում գրանցված և ընկերության բազայով ներկայացված ցուցմունքների տարբերությամբ,

2. Ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով:

Ընդամենը հաշվարկված լրացուցիչ մանրաձախ ջրամատակարարման ծավալը կազմել է 2.1 մլն խմ, որը կիրառվել է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հաշվարկներում:

Մինևույն ժամանակ, մոնիթորինգի ընթացքում դիտարկվել են նաև առևտրային հաշվառքի սարքերը սահմանազատման կետեր դուրս բերման, հոլոգրաֆիկ կնիքների, հակառակ տեղադրված ֆիլտրերի և ոչ պատշաճ ձևով խցափակված գծերի առկայությունը, քանի որ հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 2-ի N436Ա որոշման համաձայն՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը դուրս բերեր սահմանազատման կետեր, կնքեր հոլոգրաֆիկ կնիքով, ուղղեր հակառակ տեղադրված ֆիլտրերը և եռակցեր կամ, անհնարինության դեպքում, կնքեր ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված գծերը: Մոնիթորինգի ընթացքում հայտնաբերվել են հաշվառքի սարքերի սահմանազատման կետեր դուրս չբերված 655, հոլոգրաֆիկ կնիքով չկնքված հաշվառքի սարքերի՝ 46 և հակառակ տեղադրված ֆիլտրերի՝ 13 դեպք:

Խմելու ջրի ոլորտի կարգավորվող ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև սեպտեմբերի 1-ը, հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել տվյալ տարվա դեկտեմբերին հրապարակվելիք՝ բաժանորդների հաջորդ տարվա ջրամատակարարման գրաֆիկը և տարեկան առնվազն մեկ անգամ՝ դեկտեմբեր ամսվա ընթացքում, իր պաշտոնական կայքում հրապարակել այն:

2021 թվականին ջրամատակարարման գրաֆիկների հրապարակման գործընթացն իրականացվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով սահմանված կարգով:

#### **4. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ**

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները և Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ձեռքբերումները, ոլորտի զարգացման շարունակականության ապահովման նկատառումներից ելնելով հանձնաժողովը 2021 թվականի ընթացքում ծավալուն աշխատանքներ է իրականացրել մրցակցության խթանման (երաշխավորման), վարչարարության պարզեցման, գործարար միջավայրի բարելավման, ենթակառուցվածքների զարգացման ու ընդլայնման, նոր տեխնոլոգիաների ներդրման, ծառայությունների հասանելիության և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի հուսալիության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության ուղղությամբ: Հանձնաժողովի կողմից 2021 թվականի ընթացքում ընդունվել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառին առնչվող 126 իրավական ակտեր, այդ թվում՝ 7-ը նորմատիվ:

Հիշյալ աշխատանքների առնչությամբ, մասնավորապես, կարևորվում են հետևյալ միջոցառումներն (կարգավորումներ) ու դրանց արդյունքում արձանագրված՝ ոլորտը բնութագրող առանցքային ցուցանիշները.

##### **4.1. Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ**

Ի լրումն հանձնաժողովի կողմից էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում վարչարարության պարզեցմանն ու գործարար միջավայրի բարելավմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների՝ հանձնաժողովը 2021 թվականին շարունակել է նաև բնագավառը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումները.

➤ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող մի շարք հաշվետվություններ հանձնաժողովի որոշմամբ միավորվել են մեկ ընդհանուր հաշվետվության ձևի մեջ և նվազեցվել են նշված հաշվետվությունների քանակն ու ներկայացման պարբերականությունը.

➤ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորները շարժական և ամրակցված կապի ծառայությունների հիմնական տեխնիկատնտեսական

ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունը հրապարակում էին տարբեր ժամկետներում: Հաշվի առնելով նշված տեղեկատվության կարևորությունը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկայի վերլուծության, նոր միտումների և խնդիրների բացահայտման և առավել մրցունակ ու բաժանորդամետ լուծումների ներդրման տեսանկյունից, ինչպես նաև ելնելով այդ տեղեկատվության հրապարակման ժամկետների առումով միատեսակ մոտեցում կիրառելու անհրաժեշտությունից՝ հանձնաժողովի որոշումներով սահմանվել է նշված ցուցանիշների հրապարակման միասնական ժամկետ:

#### **4.2. Ենթակառուցվածքների զարգացում, ընդլայնում, նոր տեխնոլոգիաների ներդրում և ծառայությունների հասանելիության ապահովում**

➤ Հայաստանի Հանրապետության տարածքում **հանրային շարժական կապի ցանցերի** զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի շրջանակում, այդ թվում՝ հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզիոն պարտավորությունների հիման վրա, «Տելեկոմ Արմենիա», «USU Հայաստան» և «Յուբոն» փակ բաժնետիրական ընկերությունները շարունակել են զարգացնել (արդիականացնել և ընդլայնել) իրենց հանրային շարժական կապի ցանցերն ու ծածկույթները, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության 100% բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներով:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության բնակավայրերում առնվազն երկու օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը կազմել է 91% (911 բնակավայր), որը 2021 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի (884 բնակավայր) համեմատ ընդլայնվել է 27 բնակավայրով: Միևնույն ժամանակ, 64 բնակավայրով կրկնակի ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության բնակավայրերում երեք օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը և կազմել 12.8% (128 բնակավայր), որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է 69%:

Հաշվի առնելով, որ շարժական կապի լայնաշերտ տեխնոլոգիայի ցանցերի զարգացման համար անհրաժեշտ 700ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի 703-733ՄՀց և 758-788ՄՀց հատվածներն առանձնացվել են առևտրային նպատակով



տրամադրելու համար և նկատի ունենալով այդ տիրույթի նկատմամբ էլեկտրոնային հաղորդակցության շուկայում առկա հետաքրքրվածությունը՝ հանձնաժողովի որոշմամբ մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրվող ռադիոհաճախականությունների ցանկը լրացվել է 700ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի 703-733ՄՀց և 758-788ՄՀց հատվածներով:

Նշված հատվածների մրցութային հիմունքներով տրամադրումը կապահովի շարժական կապի լայնաշերտ ցանցերի հետագա զարգացումը, այդ թվում՝ կնպաստի նոր սերնդի լայնաշերտ ցանցերի ներդրմանը, ինչպես նաև կապահովի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի լրացուցիչ մուտքեր:

➤ Հայաստանի Հանրապետության տարածքում **հանրային ամրակցված կապի (հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների)** զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակում պետք է նշել, որ ներկայումս հանրապետությունում գործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի 193 լիցենզավորված օպերատոր, այդ թվում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայություններ մատուցող 12 օպերատոր, որոնցից 4-ը ծառայություններ են մատուցում հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային (աշխարհագրական) կողերով: Ընդ որում, 2021 թվականի ընթացքում լիցենզավորված 20 օպերատորներից 19-ին տրամադրվել է ցանցի լիցենզիա՝ մարզային բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար, ինչի արդյունքում հանրապետության մարզերում շարունակաբար զարգացել են հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերը և դրանց փոխադարձ ներթափանցելիության ցուցանիշները: Կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության 100% բնակավայրերն ապահովված են լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:

Մասնավորապես, հանրապետության 995 (99.4%) բնակավայրում հասանելի են հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետի անլար տեխնոլոգիաների ծառայությունները, 233 (23.3%) բնակավայրում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի, իսկ 628 (62.7%) բնակավայրում՝ լայնաշերտ ինտերնետի լարային տեխնոլոգիաների ծառայությունները, այդ թվում՝ 565

բնակավայրերում (56.5%) հասանելի են դարձել FTTx լայնաշերտ տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը, որոնք ընդգրկում են ՀՀ բնակչության ավելի քան 96,5%-ը: Ընդ որում, լայնաշերտ ինտերնետի լարային տեխնոլոգիաների նշված ցուցանիշները աճել են համապատասխանաբար 10.2%-ով (58 բնակավայրով) և 10.1%-ով (52 բնակավայրով), ինչը կանխատեսվել էր 2021 թվականի գործունեության ծրագրով:

Այս համատեքստում պետք է նշել, որ օպտիկամանրաթելային ցանցերի հասանելիության տարեկան 10.1% ընդլայնումը և վերոնշյալ՝ 56.5% ցուցանիշի արձանագրումը նպաստում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի առնվազն 80%-ում լայնաշերտ (օպտիկամանրաթելային) կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ ապահովելու միջոցառման իրականացմանը:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի ծածկույթով, ինչպես նաև լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:


➤ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև առկա մրցակցությունը, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ապահովման վերոնշյալ զարգացումները նպաստել են ոլորտը բնութագրող ներքոհիշյալ առանցքային ցուցուցանիշների արձանագրմանը.

□ հանրային շարժական կապի բաժանորդագրությունների թվաքանակը 2021 թվականի տարեվերջին կազմել է 3 599 278, որը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 3%-ով (ավելի քան 110 000 բաժանորդ), իսկ ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների թվաքանակը (այդ թվում՝ շարժական)՝ 3 309 685, որը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 7%-ով (ավելի քան 217 000 բաժանորդ):


□ ավելացել են ընդհանուր լայնաշերտ ինտերնետ հասանելիության (ներառյալ՝ շարժական ինտերնետ) ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների թվաքանակը 2021 թվականի տարեվերջի դրությամբ կազմել է 3 140 925, որից՝ շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակը՝ 2 674 304,

իսկ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը՝ 466 621: Ընդ որում, ընդհանուր լայնաշերտ ինտերնետ հասանելիության և շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվաքանակը 2020 թվականի տարեվերջի համեմատ աճել է 8%-ով, իսկ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակ՝ 8.4%-ով:


Ստորև բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների թվաքանակի 2008-2021 թվականների աճի դինամիկան.



Ստորև բերված են շարժական և ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվերի 2012-2021 թվականների աճի դինամիկան.




**Ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ  
բաժանորդների քանակը 2012-2021 թվականներ**



□ լայնաշերտ ամրակցված ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրաձախ շուկայում գերակշռել են օպտիկամանրաթելային (FTTx) տեխնոլոգիայից օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը 2021 թվականի տարեվերջին կազմել է ավելի քան 66.3% (ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակը՝ 466 621, որից օպտիկամանրաթելայինը՝ 309 196): Ընդ որում, 2020 թվականի տարեվերջի համեմատ օպտիկամանրաթելային (FTTx) տեխնոլոգիայից օգտվող բաժանորդների թվաքանակն աճել է 17%-ով: Միևնույն ժամանակ, 12%-ով նվազել է լարային xDSL տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակը.


□ 2021 թվականի տարեվերջի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 833 000 Մբիթ/վ:

Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության 2008-2021 թվականների փոփոխության դինամիկան.



- Մրցակցության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի վերջին տարիներին արձանագրված աճի շնորհիվ նվազել է այդ ծառայության սակագինը: 2021 թվականի տարեվերջին 1 ՄբԻԹ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի միջին շուկայական արժեքը 2020 թվականի տարեվերջի համեմատությամբ նվազել է 19%-ով և կազմել 510 դրամ:



Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագների 2012-2021 թվականների նվազման դինամիկան՝ 1 ՄբԻԹ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի համար.



- 2021 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, հանրապետությունում ֆիքսված (լարային) լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերը աճել են շուրջ 6.1%-ով, իսկ

շարժական լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերը՝ 23.5%-ով:

Ստորև բերված է հանրապետությունում ամրակցված և շարժական լայնաշերտ ինտերնետ կապի օգտագործված հոսքերի 2015-2021 թվականների աճի դինամիկան.



Հաշվի առնելով հանրային շարժական և ամրակցված կապի ենթակառուցվածքների մասով առկա ձեռքբերումները և հանրապետությունում ինտերնետի նկատմամբ սպառողների պահանջի աճը՝ հանձնաժողովը նախատեսում է.

- ոլորտի իրավասու և շահագրգիռ այլ մարմինների հետ շարունակական քննարկումների արդյունքում իրականացնել հանձնաժողովի տնօրինմանը հանձնված ռադիոհաճախականությունների տրամադրման մրցույթներ՝ հանրային շարժական կապի նորագույն սերնդի շարժական լայնաշերտ կապի ցանցերի զարգացման (ներդրման) նպատակով.

- շարունակել աշխատանքները, այդ թվում՝ օպերատորների հետ համագործակցելով, ինչպես նաև լիցենզիաների և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրմամբ, Հայաստանի Հանրապետության

բնակավայրերում ամրակցված (լարային և անլար տեխնոլոգիաների) լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնելու Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի տեխնոլոգիաների ցանցերի փոխադարձ ներթափանցելիության և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցուցանիշները:

**4.3. Մրցակցության խթանում (երաշխավորում), սպառողների շահերի պաշտպանություն, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի հուսալիության ու անվտանգության ապահովում**

➤ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկայի համաձայն՝ հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակված զեկույցը, հանձնաժողովի կողմից հաշվարկվել և սահմանվել են 2022 թվականի հունվարի 1-ից կիրառման ենթակա փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարները: Մասնավորապես, հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական հեռախոսակապի ցանցերի համար վերջնավորման առավելագույն վճարը կազմել է 3,87 դրամ/րոպե (առանց ԱԱՀ-ի), իսկ ամրակցված հեռախոսակապի ցանցերի համար՝ 0.41 դրամ/րոպե (առանց ԱԱՀ-ի):

Միևնույն ժամանակ, սահմանվել է, որ նշված առավելագույն վճարներից ցածր վճար կիրառելու դեպքում ընկերություններն ապահովում են դրանց համաչափ (միևնույն վճար) և ոչ խտրական կիրառումն իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական և ամրակցված կապի ցանցերի հետ փոխկապակցված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի նկատմամբ:

➤ Հանձնաժողովի կողմից սահմանվել է արտակարգ պատահարների արագ արձագանքման (փրկարար) ծառայության, ոստիկանության և շտապ բժշկական օգնության համարներին կատարվող կանչերի դեպքում հաճախորդի կողմից օգտագործվող ծառայության վայրի վերաբերյալ տեղեկությունները և հաճախորդի անձնական տվյալները հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի

օպերատորի կողմից բացահայտելու կարգը: Կարգի համաձայն՝ դեպի տվյալ արագ արձագանքման ծառայություններ (911,101,102,103) կատարված կանչերի դեպքում տվյալ կանչերն սպասարկող ծառայությունների տվյալների կենտրոնների հարցման դեպքում օպերատորները վերջիններիս փոխանցում են հաճախորդի տեղորոշման և անձնական տվյալների մասին տեղեկություններ՝ բացառապես փակ պաշտպանված կապուղիներով: Ընդ որում, տեղորոշումը՝ հանրային ամրակցված հեռախոսակապի ցանցում կանչի պարագայում դա ցանցի վերջնավորման կետն է, որը նույնականացվում է բաժանորդի ծառայությունների մատուցման պայմանագրում ամրագրված՝ ծառայությունների մատուցման հասցեով, իսկ հանրային շարժական հեռախոսակապի ցանցում կանչի պարագայում՝ բազային կայանի տեղակայման դիրքը (նույնականացվում է որոշակի համարով (Cell ID) և աշխարհագրական տեղակայման կորորդինատներով) և սփռման շառավիղը: Ի դեպ, պետք է նշել, որ հեռախոսակապի օպերատորները նշված տեղորոշման համակարգի գործարկումն ապահովում են 2022 թվականի ապրիլի 1-ից:

➤ Հանրային շարժական կապի օպերատորների ցանցերով պետական մարմինների կողմից չպատվիրված (այլ անձանց կողմից չարամտորեն ուղարկված) կարճ հաղորդագրությունների (SMS) ուղարկման դեպքերը բացառելու նպատակով հանձնաժողովի որոշմամբ սահմանվել են նշված օպերատորների ցանցերով իր կամ ինտերակտիվ (կարճ հաղորդագրությունների առաքման) ծառայություններ մատուցող անձանց կողմից բացառապես պատվիրված կարճ հաղորդագրությունների ուղարկման ապահովմանն ուղղված պահանջներ:

➤ Մարդկանց կյանքի, առողջության, գույքի նկատմամբ սպառնալիքների, պետական անվտանգության ու հասարակական կարգի խախտման, հանցագործությունների, խարդախությունների, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի հուսալիության և անվտանգության խափանման նկատառումներով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով չարտոնված կանչերի (հեռախոսազանգ, կարճ հաղորդագրություն) իրականացումը բացառելու նպատակով հանձնաժողովը սահմանել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով չարտոնված կանչերի իրականացումը բացառելու մասին կարգը՝ ներառյալ հեռախոսակապի օպերատորի կողմից չարտոնված կանչերի կանխարգելման համակարգի գործարկման պահանջները:



Հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտում հանձնաժողովի կողմից իրականացվող կարգավորումը, այդ թվում՝ ենթակառուցվածքների զարգացման առումով՝ Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) «G5 Benchmark» փորձագիտական հաշվետվությունում Հայաստանի Հանրապետությունը, որպես հեռահաղորդակցության ոլորտի 5-րդ սերնդի համագործակցային և թիրախային կարգավորում իրականացնող, ԱՊՀ տարածաշրջանում ստացել է ամենաբարձր գնահատականը: Բացի այդ, Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) կողմից հրապարակված՝ ITU 2020 թվականի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կարգավորման գնահատման ցուցանիշով ստացել է բարձր 88.5 գնահատականը, որը հանձնաժողովին դասել է կարգավորման չորրորդ սերնդին (G4)՝ որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության նպատակներով առաջնորդվող:

## **5. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն**

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

2021 թվականի ընթացքում Էներգետիկայի բնագավառի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունները, «Վեոն Արմենիա», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունները հանձնաժողովի սահմանած ձևերով և պարբերականությամբ ներկայացրել են ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 20-ին դիմել էր հանձնաժողով՝ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների վերանայման հայտով: Հաշվի առնելով վերջին 19 տարիներին «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ունիվերսալ ծառայությունների

սակագների վրա ազդող գործոնների էական փոփոխությունները, հատկապես աշխատավարձի գծով ծախսերի աճը, վերանայվել և սահմանվել են փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագները, որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի մայիսի 1-ից:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումների գործընթացը վերահսկելու նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել, վերլուծել և ամփոփել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ, պայմանավորված այն հանագամանքով, որ 2021 թվականի ընթացքում մեկնարկել է «Արմփաուեր» փակ բաժնետիրական ընկերության գործունեության լիցենզիայով ամրագրված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ժամանակահատվածը, համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, վերջինիս հատուկ հաշիվը սպասարկող բանկի և էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների միջև կնքված գրավի պայմանագրում, որի արդյունքում «Արմփաուեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ որպես նոր գրավառու, ևս կհանդիսանա գրավի պայմանագրի կողմ և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հատուկ հաշիվին մուտքագրված գումարները, ի թիվս մյուս գրավառուների (էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների), ամսական արդյունքներով կգրավադրվեն նաև «Արմփաուեր» փակ բաժնետիրական ընկերության օգտին՝ մինչև տվյալ ամսվա արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից վճարումների ամբողջական կատարումը:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային

ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով 2021 թվականին ևս ամփոփվել է հիշյալ ընկերությունների կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունը և հրապարակվել հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի (այդ թվում՝ խմելու և ոռոգման ջրի մասով) 2020-2021 թվականների համեմատական ցուցանիշները ներկայացված են սույն հաշվետվության NN 8-11-րդ հավելվածներում:

## **6. Սպառողների շահերի պաշտպանություն**

### **6.1. Սպառողների դիմումների քննարկում**

Հանձնաժողովը, հավատարիմ մնալով սպառողներին հուզող հարցերին և դիմում-բողոքներին պատշաճ պարզաբանումներ ու առավել արդյունավետ լուծումներ առաջարկելու իր որդեգրած քաղաքականությանը, 2021 թվականին ևս քննարկել է սպառողներից ստացված՝ հանրային ծառայությունների ոլորտում մատակարար-սպառող հարաբերություններին առնչվող դիմումները:

Հաշվետու տարում հանձնաժողով է ներկայացվել 1248 դիմում, որոնցից 583-ը՝ գրավոր, իսկ 665-ը՝ բանավոր:

Գրավոր դիմումներից 156-ը բավարարվել են, 94-ը մասամբ են բավարարվել, 8 դիմումի դեպքում տրվել է տեղեկատվություն, 27-ի դեպքում հանձնաժողովում հարուցված վարչական վարույթը կարճվել է, 10 դիմումների քննարկումը դուրս է եղել հանձնաժողովի իրավասությունների տիրույթից, 9 դիմումներ վերահասցեագրվել են իրավասու մարմիններ, իսկ 279-ը՝ չեն բավարարվել (տրվել է պարզաբանում, արձանագրվել է խախտման բացակայություն):

Բանավոր դիմումներից 29-ով բարձրացված խնդիրները կարգավորվել են, 177 դիմումի տրվել է պարզաբանում, 243-ի դեպքում առաջարկվել է գրավոր դիմել հանձնաժողով, 48-ի դեպքում՝ կարգավորվող ընկերություններին, իսկ 14-ի դեպքում՝ այլ իրավասու կառույցների, քանի որ դիմումներով բարձրացված հարցերի քննարկումը դուրս է եղել հանձնաժողովի իրավասությունների տիրույթից, 147 դիմումի դեպքում

դիմումատուներին տրվել է անհրաժեշտ տեղեկատվություն, 7-ի դեպքում դիմումատուների հետ հնարավոր չի եղել հետադարձ կապ հաստատել:

Հանձնաժողով ներկայացված 583 գրավոր դիմումից 196-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի, 62-ը՝ բնական գազի, 280-ը՝ խմելու ջրի մատակարարման, 45-ը՝ հեռահաղորդակցության բնագավառներին, իսկ բանավոր ներկայացված 665 դիմումից 250-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի, 48-ը՝ բնական գազի, 311-ը՝ խմելու ջրի մատակարարման և 56-ը՝ հեռահաղորդակցության բնագավառներին: Ներկայացված դիմումներն առնչվել են մատուցվող ծառայությունների դադարեցման և վերականգնման, սպասարկման որակին, ներկայացված վճարման հաշիվներին, մատուցված ծառայությունների քանակի և արժեքի վերահաշվարկներին, նոր սպառման համակարգերի միացմանը, ինչպես նաև մատակարար-սպառող հարաբերությունների շրջանակում այլ կարգավորվող ընթացակարգերին:

Հանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով, ինչպես նաև հանձնաժողով այցելելով՝ քաղաքացիները և կազմակերպությունների ներկայացուցիչները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում՝ անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ:

2021 թվականի ընթացքում հանձնաժողով ներկայացված դիմումների և հաշվետվությունների վերլուծությունների արդյունքները հաշվի են առնվել էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակման ընթացքում, իսկ դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սպառողը հնարավորություն է ունեցել նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Տեղեկատվություն սպառողին» և «Հարց ու պատասխան» բաժիններից: Սպառողի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Հարց ու պատասխան» բաժնում թարմացվել են դիմումատուի կողմից հաճախակի տրվող հարցերը:

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների

մատուցմանն առնչվող գրավոր և բանավոր ներկայացված դիմումների սահմանված կարգով և ժամկետներում քննարկումը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշ, մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողով ներկայացված՝ էլեկտրական էներգիայի, բնական գազի, խմելու ջրի մատակարարմանը և հեռահաղորդակցության ոլորտին առնչվող գրավոր և բանավոր դիմումների վերաբերյալ 2020-2021 թվականների համեմատական ցուցանիշները ներկայացված են սույն հաշվետվության N°N°12-15-րդ հավելվածներում:

## **6.2. Սպասարկման որակի ցուցանիշներ**

Սպառողներին անհանգստացնող խնդիրների շարքում իր կարևորությամբ առանձնանում է կարգավորվող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովումը: Նշված գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության առանցքում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության և հանձնաժողովի կողմից տեղում իրականացվող մոնիթորինգի, այնպես էլ սպառողների դիմում-բողոքների ուսումնասիրության միջոցով:

Մասնավորապես, հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների դիմում-բողոքների ուսումնասիրության հիման վրա մշտական դիտարկման է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից

կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը,

- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին, նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման համակարգին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացներում սահմանված ժամկետների խախտումները և դրանց պատճառները:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկման որակին վերաբերող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ իրականացնելու նպատակով հանձնաժողովի նախագահի 2021 թվականի մայիսի 10-ի N303-ՀՆ հրամանի հիման վրա ստեղծված աշխատանքային խումբը 2021 թվականի մայիսի 17-21-ն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրություններ է իրականացրել ընկերության գլխավոր գրասենյակում, «Կենտրոն», «Արաբկիր», «Նորք», «Էրեբունի», «Շենգավիթ» շահագործման շրջաններում և «Աբովյան», «Չարենցավան», «Հրազդան», «Սևան», «Գավառ», «Մարտունի», «Վարդենիս» էլեկտրական ցանցերում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ էլեկտրամատակարարման ընդհատման տևողությունը բազմաթիվ դեպքերում գերազանցել է հանձնաժողովի նորմատիվ կարգավորումներով սահմանված՝ էլեկտրամատակարարման ընդհատման թույլատրելի տևողությունը, սակայն ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նշված ընդհատումների տևողությունը ներկայացվել է թույլատրելի սահմաններում: Բացի այդ, ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը տարեկան կտրվածքով չի իրականացնում հանձնաժողովի նորմատիվ կարգավորումներով սահմանված՝ սպառողների պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողության ժամկետների հաշվառում: Աշխատանքային խմբի ուսումնասիրությունների հիման վրա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի արդյունքում հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի N324Ա որոշմամբ ընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 10.0 մլն դրամ գումարի չափով, իսկ ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը ապահովել սպառողների պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողության

տարեկան կտրվածքով ժամկետների հաշվառման համակարգի ներդրումը և այդ մասին տեղեկացնել հանձնաժողովին՝ ապահովելով նաև նշված ժամկետների հետագա հաշվառումը:

Միաժամանակ, սպառողների կողմից ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ դիմումների և այդ առնչությամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված՝ ընկերության սպասարկման տարածքներում պոմպակայաններին մատակարարված էլեկտրական էներգիայի լարման սահմանված պահանջներին հնարավոր անհամապատասխանության վերաբերյալ գրության հիման վրա հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հունիսի 30-ի N425-ՀՆ հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որն իրականացրել է ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ սպառողների կողմից ներկայացված դիմումներում նշված ժամանակահատվածում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքներում պոմպակայաններին մատակարարված էլեկտրական էներգիայի լարման՝ սահմանված պահանջներին համապատասխանության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման ընդհատումների (դադարեցումների) վրա դրա հնարավոր ազդեցության ստուգման մոնիթորինգ: Մոնիթորինգի արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություններին հանձնարարվել է էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշների հարցում հետագա անհամաձայնություններից խուսափելու նպատակով (որպես պայմանագրային կողմեր) փոխադարձ վերահսկողություն իրականացնել օպերատիվ փաստաթղթերում էլեկտրաէներգիայի ընդհատման տևողության, որակը խախտելու դեպքում պատճառները և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակահատվածն արձանագրելու համար՝ առաջնորդվելով գործող կարգավորումներով և մատակարարման պայմանագրով սահմանված պահանջներով: Բացի այդ, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնարարվել է ձեռնարկել միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1939-Ն որոշմամբ հաստատված «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգով նախատեսված փաստաթղթերի, մասնավորապես,

Էլեկտրամատակարար կազմակերպության և սպառողի միջև ըստ գույքային պատկանելության ցանցերի (ըստ հաշվեկշռի) համատեղ ճշտված սահմանազատման և շահագործման պատասխանատվության վերաբերյալ ակտերի վերականգնման համար, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում ներառել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության պոմպակայանների առևտրային հաշվառքի սարքերը և ընկերությանը մշտադիտարկման հնարավորություն տալ, ինչպես նաև էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգի տվյալների հավաքագրման բազայի հնարավորությանը համապատասխան՝ ապահովել համակարգում ներառված առևտրային հաշվառքի սարքերի ցուցմունքների շուրջօրյա գրանցումները:

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման որակին վերաբերող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ իրականացնելու նպատակով հանձնաժողովի նախագահի 2021 թվականի մարտի 9-ի N138-ՀՆ հրամանի հիման վրա ստեղծված աշխատանքային խումբը 2021 թվականի մարտի 12-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների ուսումնասիրություն «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր գրասենյակում, ինչպես նաև Երևանի, Լոռու, Շիրակի, Արմավյանի, Գավառի և Սևանի սպասարկման տարածքների՝ տեխնիկական սպասարկում իրականացնող «Էյ-Ի-Ջի Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաճյուղերում:

Մոնիթորինգի արդյունքում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնարարվել է տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպության աշխատանքների վերահսկողություն իրականացնելու նպատակով մշակել և ներդնել համապատասխան ընթացակարգեր, նշված աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ներկայացնել առաջարկություններ՝ գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները բարելավելու և բնական գազի օգտագործման ընթացքում պատահարները



նվազագույնի հասցնելու ուղղությամբ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների, ինչպես նաև բնական գազի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևում համապատասխան դրույթների լրամշակման վերաբերյալ:

Բնական գազի մատակարարման ոլորտում մատակարար-սպառող կարգավորվող իրավահարաբերությունների կատարելագործման և առավել հստակեցման նպատակով հանձնաժողովում 2021 թվականին մեկնարկել է բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման գործընթաց, որի շրջանակում, ի թիվս այլ հարցերի, դիտարկվել է նաև մոնիթորինգի արդյունքում արձանագրված խնդիրների կարգավորմանն ուղղված դրույթների լրամշակման հնարավորությունը:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման գործընթացը նախատեսվում է ավարտել 2022 թվականին:

2021 թվականի ընթացքում իրականացվել են նաև էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից համակարգերին նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգերի միացման կամ միացման փոփոխության գործընթացներում սահմանված ժամկետների խախտման և դրանց պատճառների վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություններ:

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման աշխատանքները մշտապես գտնվում են հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Այս ուղղությամբ հանձնաժողովը, համագործակցելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ, 2011 թվականից սկսած մի շարք փոփոխություններ է կատարել էլեկտրական ցանցին նոր սպառողների միացմանն առնչվող իրավական ակտերում, և ներկայումս զգալիորեն կրճատվել ու նվազագույնի են հասցվել միացման ժամկետները և գործընթացները:

Ներկայումս էլեկտրական ցանցին միացման գործընթացը հնարավորինս պարզեցվել է, իսկ ժամկետները հասցվել են նվազագույնի:

Մատուցվող ծառայությունների՝ սպասարկման որակի ցուցանիշների նկատմամբ հանձնաժողովի կողմից իրականացվող մշտական դիտարկման արդյունքները հնարավորություն են տալիս կատարել արձանագրված թերությունների համակողմանի և խորքային վերլուծություն՝ վեր հանելով դրանց հիմքում ընկած իրական պատճառները

և խորամուխ լինելով դրանց առավել արդյունավետ կարգավորմանն ուղղված լուծումների որդեգրմանը: Նշված լուծումները դառնում են համապատասխան ծառայության մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման առարկա՝ անհրաժեշտ ազդակներ հաղորդելով տվյալ ոլորտի ներդրումային ծրագրերում համապատասխան ուղղությունների նախատեսման համար:

Սպառողներին մատուցվող ծառայությունների՝ սպասարկման որակի պահանջների խախտման համար 2021 թվականի ընթացքում մատակարար կազմակերպությունները բաժանորդներին վճարել են դրամային հատուցումներ՝ էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով սահմանված չափերով, մասնավորապես՝

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից դրամային հատուցում է տրամադրվել 78748 բաժանորդի, ընդհանուր՝ 137.2 միլիոն դրամի չափով,
- «Գազարոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից դրամային հատուցում է տրամադրվել 975 բաժանորդի, ընդհանուր՝ 2.0 միլիոն դրամի չափով,
- «Վեոլիա Ջուր փակ բաժնետիրական ընկերության կողմից դրամային հատուցում է տրամադրվել 219 բաժանորդի, ընդհանուր՝ 0.265 միլիոն դրամի չափով:

Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունները եռամսյակային արդյունքներով հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

2021 թվականին լրամշակվել են էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները, որով՝

- սահմանվել են ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողի դարձափոխիչային (ռեվերսային) հաշվիչի խախտման դեպքում մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի վերահաշվարման մեխանիզմներ այն դեպքում, երբ ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողին ամրացված առևտրային հաշվիչը ներառված է էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում.
- ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողներին հնարավորություն է

ընձեռվել տեղակայելու առևտրային հաշվառքի սարքի հարաչափերին համապատասխան վերստուգիչ հաշվառքի սարք:

- սահմանվել է մատակարարի կողմից սպառողին տույժ վճարելու պարտավորություն այն դեպքում, երբ հաշվարկային փաստաթղթում նշվել է սպառողի փաստացի սպառած էլեկտրաէներգիայի քանակից ավելի քանակություն.
- պետական, համայնքային կամ միջազգային աջակցության ծրագրերի իրականացման շրջանակում (իրավասու մարմինների գրությունների հիման վրա) հանձնաժողովին վերապահվել է իրավասություն՝ ընդունելու առևտրային հաշվառքի սարքերի փոխարինման գործընթացին առնչվող անհատական որոշումներ:

Կանոններում այս փոփոխությամբ ամրագրված կարգավորումները 2021 թվականին արդեն իսկ կիրառվել են գործողության մեջ: Մասնավորապես, հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 5-ի N153Ա որոշմամբ սահմանվել է, որ Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական Միության հետ համատեղ իրականացվող «Եվրոպական Միությունը Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի շրջանակում Երևան քաղաքի 104 բազմաբնակարան շենքերի տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման համար առևտրային հաշվիչները դարձափոխչային (ռեվերսային) բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինվում են առանց կանոններով սահմանված կանխավճարի գումարների գանձման: Նշված ծրագրի արդյունքում վերը նշված բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել են արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ներշենքային և աստիճանավանդակային հատվածների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների էլեկտրական էներգիայի մատակարարումը՝ նպաստելով էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցով բնակչության սպասարկման ծախսերի կրճատմանը:

2021 թվականին լրամշակվել են նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները: Մասնավորապես.

- ելնելով այն հանգամանքից, որ սպառողների համար առավել հասանելի է

մատակարարի պաշտոնական կայքը, ընկերության սպասարկման տարածքի ջրամատակարարման գրաֆիկի՝ թերթում տարեկան առնվազն երկու անգամ հրապարակելու պահանջի փոխարեն սահմանվել է ընկերության պաշտոնական կայքում տարեկան առնվազն մեկ անգամ հրապարակելու պահանջ, ինչի արդյունքում սահմանվել են նաև ջրամատակարարման գրաֆիկի մինչ հրապարակումը հանձնաժողով համաձայնության ներկայացնելու և հրապարակման նոր ժամկետներ.

- բոլոր բաժանորդներին ժամը 7:00-24:00-ն ընկած ժամանակահատվածում ամենօրյա առնվազն 6-ժամյա ջրամատակարարմամբ ապահովելու պահանջի ուժի մեջ մտնելու ժամկետը «Երևան Զուր», «Հայջրմուկոյուղի», «Լոռի-ջրմուկոյուղի», «Շիրակ-ջրմուկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրով ամրագրված մատակարարի սպասարկման տարածքի գոտիների համար համապատասխանեցվել է նշված պայմանագրով սահմանված նոր ժամկետին:

## **7. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը**

Համաձայն գործող օրենսդրության՝ հանձնաժողովն իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովում է զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի և այլ միջոցներով: Այս ուղղությամբ հանձնաժողովի ձեռնարկած քայլերը կրում են հետևողական բնույթ և միտված են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ տեղեկատվության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության բարձրացմանը: Մասնավորապես.

- հանձնաժողովը, որպես կոլեգիալ ինքնավար մարմին, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ՝ դռնբաց նիստերի միջոցով: 2021 թվականին հրավիրվել է հանձնաժողովի 66 նիստ և ընդունվել 498 որոշում: Այդ առումով, հանձնաժողովը, իր սահմանած կարգի համաձայն, հայտարարում է հանձնաժողովի նիստերի անցկացման վայրը, օրը և ժամը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հանրության

ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին՝ իր վարչական շենքի հնարավորությունների սահմաններում, ստանալու օրակարգ և քննարկվող նյութերը, ներկայացնելու տեղեկություններ և հանդես գալու ելույթներով: Նիստում սպառողների համար սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր քննարկելու դեպքում հանձնաժողովը ողջամիտ ժամկետում այդ մասին իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնին և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին, հանդես գալու ելույթներով և առաջարկություններով: Նիստերի կազմակերպման և անցկացման վերաբերյալ կանոնակարգումների բարեփոխումները մշտապես հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են:

- 2021 թվականին ավարտվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի արդիականացման աշխատանքները, ներդրվել է ավելի արագ և հարմարավետ կառավարման համակարգ՝ դարձնելով կայքը ժամանակին համընթաց, անվտանգ և ապահովելով ընդհանուր որոնման ժամանակակից գործիքներից և սմարթ հեռախոսներից կայքի պատշաճ դիտելիություն: Հանձնաժողովի կայքը պարունակում է տեղեկություններ ինչպես հանձնաժողովի գործող որոշումների, այնպես և քննարկվող նախագծերի, կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող սակագների հայտերի, վերջիններիս գործունեության տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշների, կարգավորման ոլորտին առնչվող նորությունների և հաղորդագրությունների, հանձնաժողովի հետ կապի միջոցների և այլնի մասին:
- հանձնաժողովի կայքում գործել է «[www.e-request.am](http://www.e-request.am)» էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը, ինչը հնարավորություն է տվել քաղաքացիներին առցանց եղանակով ներկայացնել դիմում, հարցում կամ բողոք և նույնպես առցանց ստանալ պատասխանը:
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը պարբերաբար թարմացվել է՝ հնարավորություն ընձեռելով զանգվածային լրատվամիջոցներին,

սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի իրազեկվել հանձնաժողովի գործունեության, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ներկա գործընթացների, ծառայությունների սպասարկման որակի, մատակարար-սպառող փոխհարաբերությունների և այլնի մասին.

- հանձնաժողովի հաղորդակցության գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվել են նաև հարթակներ սոցիալական ցանցերում, որոնց միջոցով սպառողների հետ շփումները կրել են ավելի ինտերակտիվ և օպերատիվ բնույթ.
- հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու օրենքի պահանջը՝ ինչպես յուրաքանչյուր տարի, 2021 թվականին ևս, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը: Միաժամանակ, իր հաջորդ տարվա գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու և ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով հանձնաժողովն այն հրապարակել է իր պաշտոնական ինտերնետային կայքում և քննարկել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների և սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում եռամսյակային արդյունքներով հրապարակվել է 2021 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն.
- 2021 թվականին հանձնաժողովի անդամները և մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես են եկել ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

## **8. Միջազգային համագործակցություն**

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում

այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը 2021 թվականի ընթացքում համագործակցել է Համաշխարհային բանկի (WB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), ԵՄ համապատասխան կառույցների, մասնավորապես՝ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg), Էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի (Energy Community Regulatory Board), Էներգետիկ համայնքի քարտուղարության (Energy Community Secretariat), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) հետ: Նշված կառույցների կողմից պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ էներգետիկ շուկաների ազատականացման, հաղորդման և բաշխման ցանցերի ցանցային կողեքսների մշակման, ցանցերի հուսալիության և անվտանգության, ներառյալ՝ կիրառանվտանգության, վերականգնվող ռեսուրսներից էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման, ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կարգավորման քաղաքականության վերաբերյալ՝ հնարավորություն ընձեռելով հանձնաժողովին ուսումնասիրելու միջազգային լավագույն փորձը և ստանալու համապատասխան տեղեկատվություն:

Հանձնաժողովը Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) և Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) անդամ է, որոնց հետ համագործակցության շրջանակում մասնակցում է նշված կազմակերպությունների կողմից ստեղծված համապատասխան կոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին:

2021 թվականին հանձնաժողովը շարունակել է աշխատանքները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների ցանցի (EaPeReg) շրջանակում՝ ԱԳ երկրների միջև միջազգային ռոումինգի, կարգավորող մարմինների անկախության ամրապնդման և լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման, ինչպես նաև

ռադիոհաճախականությունների հարցերով աշխատանքային խմբերում, ներառյալ՝ սպեկտրի տարածաշրջանային համաձայնագրի (RSA) և ռոումինգի տարածաշրջանային համաձայնագրի (RRA) մասով: Հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը «ԵՄ հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնության հետ՝ հանձնաժողովի անկախության ամրապնդման, լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման և քարտեզագրման, ինչպես նաև շուկաների վերլուծության շրջանակում:

Ինչպես արդեն իսկ նշվել էր, հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտում հանձնաժողովի կողմից իրականացվող կարգավորումը՝ Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) հրապարակված ITU 2020 թվականի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կարգավորման գնահատման ցուցանիշով հանձնաժողովը ստացել է 88.5 գնահատականը, որը հանձնաժողովին դասել է կարգավորման չորրորդ սերնդին (G4)՝ որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության նպատակներով առաջնորդվող, իսկ «G5 Benchmark» փորձագիտական հաշվետվությունում Հայաստանի Հանրապետությունը, որպես հեռահաղորդակցության ոլորտի 5-րդ սերնդի համագործակցային և թիրախային կարգավորում իրականացնող, ԱՊՀ տարածաշրջանում ստացել է ամենաբարձր գնահատականը:

Այս համատեքստում, միջազգային հարթակներում հանձնաժողովի ակտիվ ներգրավվածությամբ և արդյունավետ գործունեությամբ պայմանավորված, 2021 թվականին հանձնաժողովն ընտրվել է EaPeReg ցանցի 2022 թվականի նախագահող մարմին, իսկ փոխնախագահող մարմինը Չեխիայի հեռահաղորդակցության գրասենյակն է (CTU):

Կնքված երկկողմանի հուշագրերի շրջանակում շարունակվել է համագործակցությունը Ուկրաինայի հաղորդակցության և տեղեկատվայնացման պետական կարգավորման ազգային հանձնաժողովի (NCCIR), Չեխիայի հեռահաղորդակցության հանձնաժողովի (CTU), Լատվիայի Հանրապետության հանրային ծառայությունների հանձնաժողովի (PUC), Լեհաստանի հանրապետության էլեկտրոնային հեռահաղորդակցության գրասենյակի (UKE) հետ, ինչպես նաև Ռումինիայի հեռահաղորդակցության կառավարման և կարգավորման ազգային մարմնի (ANCOM) հետ՝ երկկողմանի փոխըմբռնման հուշագրի նախապատրաստման աշխատանքներում:



Չուգահեռաբար, 2021 թվականին հանձնաժողովը շարունակել է աշխատանքները ԵԱՏՄ անդամ պետությունների կապի ոլորտում մրցակցության և խոչընդոտների վերացման հարցերով աշխատանքային խմբի և ԵԱՏՄ անդամ պետությունների օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում միջազգային տրաֆիկի փոխանցումների ժամանակ խարդախությունների կանխարգելման հարցերով աշխատանքային ենթախմբի շրջանակում, ինչպես նաև մասնակցել է ԵԱՏՄ անդամ պետությունների կապի օպերատորների միջև տրաֆիկի անցման ծառայությունների գնագոյացման կարգավորման վերաբերյալ միջազգային տեսակոնֆերանսներին և քննարկումներին:

Հանձնաժողովը մասնակցել է Եվրոպայի էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) կողմից կազմակերպվող աշխատանքներին՝ «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» EU4Energy-ի ծրագրի շրջանակում:

2021 թվականին շարունակվել է համագործակցությունը Վրաստանի էներգետիկայի կարգավորման ազգային հանձնաժողովի և Չեխիայի հեռահաղորդակցության հանձնաժողովի հետ՝ կնքված հուշագրերի, ինչպես նաև 2021 թվականին Հայաստանի և Վրաստանի միջև ձեռք բերված մտադրությունների մասին գրությունների շրջանակներում, որը խորացրեց համագործակցությունը տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացման և անդրսահմանային առևտրի խթանման, ինչպես նաև էներգետիկ շուկաների ազատականացման ոլորտում լավագույն փորձի փոխանակման ուղղությամբ:

Հանձնաժողովը, հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին արձանագրության» («Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի» 20-րդ հավելված) շրջանակում նախատեսված աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված մարմին, շարունակել է մասնակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բնական մենաշնորհների գծով Խորհրդատվական կոմիտեի և աշխատանքային խմբի նիստերին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի №48-Լ որոշմամբ հավանության արժանացած և 2021 թվականի նոյեմբերի 18-ի

N°1902-L որոշմամբ հաստատված, համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցի 5-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի 25-րդ կետերով նախատեսված միջոցառումների շրջանակում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ, հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան կառույցների հետ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Մասնավորապես, հանձնաժողովը մասնակցել է ԵԱՏՄ գազի և էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկաների ձևավորման համար պահանջվող փաստաթղթերի նախագծերի մշակմանը, ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկայի խորհրդատվական կոմիտեի, նավթի և գազի խորհրդատվական կոմիտեի, ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ենթակոմիտեի, ինչպես նաև ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկայի ձևավորման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի նիստերին:

Արդյունավետ համագործակցություն է իրականացվում Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ, որը շարունակվել է նաև 2021 թվականի ընթացքում՝ համատեղ աշխատանքային ծրագրին համապատասխան: Մասնավորապես, երկու կարգավորող մարմինների համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակում իրականացվել են համապատասխան օրենքների և կանոնների նախագծերի մշակման, լրամշակման, ոլորտների մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաև նախանշված քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցության աշխատանքներ՝ ըստ կարգավորվող ոլորտների և գործառույթների:

## **9. Հանձնաժողովի ֆինանսավորում և պետական բյուջեի մուտքեր**

Հանձնաժողովի տարեկան բյուջեն ձևավորվում է «Հանրային ծառայությունները

կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներին համապատասխան:

2021 թվականին հանձնաժողովի բյուջեն կազմել է 852.6 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 832.7 մլն դրամը, իսկ տարբերությունը՝ 19.9 մլն դրամի չափով, վերադարձվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Հանձնաժողովի բյուջետային մուտքերը ձևավորվում են հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներից: Կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, վճարողների շրջանակը և վճարման կարգը սահմանված են «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքով:

Հետևաբար, հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման և դրանց ծախսման հետ կապված հարաբերությունները բյուջետային մուտքերի և ելքերի մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա թողնում են չեզոք ազդեցություն:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը հանրային ծառայությունների ոլորտի կարգավորող մարմնի անկախության և վարչական իրավազորության ամրապնդման հանձնառություն ստանձնել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրով (CEPA):


2021 թվականի ընթացքում հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերությունները զգալի մուտքեր են ապահովել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, հանձնաժողովի կիրառած տուգանքների, ինչպես նաև նոր էլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ներկայացված ֆինանսական երաշխիքներից գանձվող գումարների տեսքով: Նշված աղբյուրներից Հայաստանի Հանրապետության

պետական բյուջե փոխանցվել է շուրջ 8.5 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 8.0 մլրդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը:

Միաժամանակ, «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի համաձայն՝ հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից 2021 թվականի արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա կարգավորման պարտադիր վճարների ընդհանուր գումարը կազմել է 852.6 մլն դրամ:

**2020 և 2021 թվականների ավարտված և շահագործման հանձնված ներդրումների ծավալները**

Ընկերություն	Ներդրումների ծավալը (մլն. դրամ)	
	2020 թվական	2021 թվական
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	5 346.2	13 206.4
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	36 420.2	49 050.3
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	1 142.7	-
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ	8 517.9	32 199.7
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	978.5	8 164.0
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	62 100.9	77 370.0
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	23 021.9	6 958.2
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	89.0	10.6
	-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>137 617.3</b>	<b>186 959.2</b>



Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության հաշվետվության

**ՎԵՐԱԿԱՆՔԼՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ**

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	2022 հունվար	2023	2024	2025 հունվար
Կայանների քանակը	գործարկման ենթակա	հատ	41	15	2	278
	գործող	հատ	220	261	276	
Կայանների հզորությունը	գործարկման ենթակա	կՎտ	202 497	50 138	11 828	704 482
	գործող	կՎտ	440 019	642 516	692 654	
Կայաններում էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրությունը	գործարկման ենթակա	մլն կՎտժ	491,2	132,6	36,1	1 695
	գործող	մլն կՎտժ	1 034,6	1 525,9	1 658,5	
Կայաններում իրականացման ենթակա ներդրումների կանխատեսվող ծավալը (առանց ԱԱՀ)	գործարկման ենթակա	մլն դրամ	80 579	19 394	6 658	106 631

**ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՔԻ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ  
ԱՍՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ**

ՀՀ մարզի անվանումը	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2022թ. հունվարի 1-ի դրությամբ գործող	2022-2024թթ. ընթացքում գործարկման ենթակա	2025թ. հունվարին կանխատեսվող
<b>Լոռի</b>	Քանակը	հատ	28	4	<b>32</b>
	Հզորությունը	կՎտ	67 585	5 703	<b>73 288</b>
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	175,7	21,6	<b>197,4</b>
<b>Սյունիք</b>	Քանակը	հատ	59	5	<b>64</b>
	Հզորությունը	կՎտ	101 128	13 919	<b>115 046</b>
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	267	47	<b>313,9</b>
<b>Տավուշ</b>	Քանակը	հատ	15	3	18
	Հզորությունը	կՎտ	23 569	3 000	26 569
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	49,9	12,5	62,4
<b>Վայոց Ձոր</b>	Քանակը	հատ	33	5	<b>38</b>
	Հզորությունը	կՎտ	79 124	19 601	<b>98 725</b>
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	200,1	58,9	<b>259,0</b>
<b>Արմավիր</b>	Քանակը	հատ	4	2	6
	Հզորությունը	կՎտ	10 291	998	11 289
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	21,4	5,1	26,5
<b>Գեղարքունիք</b>	Քանակը	հատ	11	0	11
	Հզորությունը	կՎտ	29 707	0	29 707
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	64,2	0,0	64,2

ՀՀ մարզի անվանումը	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2022թ. հունվարի 1-ի դրությամբ գործող	2022-2024թթ. ընթացքում գործարկման ենթակա	2025թ. հունվարին կանխատեսվող
Շիրակ	Քանակը	հատ	8	1	9
	Հզորությունը	կՎտ	19 275	2 569	21 844
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	45,4	15,9	61,3
Արարատ	Քանակը	հատ	2	0	2
	Հզորությունը	կՎտ	3 520	0	3 520
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	5,0	0,0	5,0
Կոտայք	Քանակը	հատ	16	0	16
	Հզորությունը	կՎտ	15 362	0	15 362
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	46,3	0,0	46,3
Արագածոտն	Քանակը	հատ	12	0	12
	Հզորությունը	կՎտ	33 857	0	33 857
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	49,8	0,0	49,8
Երևան	Քանակը	հատ	1	0	1
	Հզորությունը	կՎտ	750	0	750
	Էլեկտրական էներգիայի սպասվող արտադրությունը	մլն կՎտժ	2,6	0,0	2,6



Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության հաշվետվության

**ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՔՐ ՀԻՂՈՒՄԵՆԿԱՑՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՍՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ԴՐԱՆՑ ՏԻՊԵՐԻ**

Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2022թ. հունվարի 1-ի դրությամբ գործող	2022թ. հունվարի 1-ի դրությամբ կառուցվող	Ընդամենը
<b>Քանակը, այդ թվում</b>	<b>հատ</b>	<b>189</b>	<b>20</b>	<b>209</b>
<i>հաշվարկային</i>	<i>հատ</i>	<i>9</i>	<i>0</i>	<i>9</i>
<i>բնական ջրահոսքերի վրա</i>	<i>հատ</i>	<i>135</i>	<i>13</i>	<i>148</i>
<i>նոռզման համալիրների վրա</i>	<i>հատ</i>	<i>38</i>	<i>7</i>	<i>45</i>
<i>խմելու ջրատարների վրա</i>	<i>հատ</i>	<i>7</i>	<i>0</i>	<i>7</i>
<b>Հզորությունը</b>	<b>կՎտ</b>	<b>384 167</b>	<b>45 790</b>	<b>429 957</b>
<i>հաշվարկային</i>	<i>կՎտ</i>	<i>9 582</i>	<i>0</i>	<i>9 582</i>
<i>բնական ջրահոսքերի վրա</i>	<i>կՎտ</i>	<i>303 668</i>	<i>39 360</i>	<i>343 028</i>
<i>նոռզման համալիրների վրա</i>	<i>կՎտ</i>	<i>67 766</i>	<i>6 430</i>	<i>74 196</i>
<i>խմելու ջրատարների վրա</i>	<i>կՎտ</i>	<i>3 152</i>	<i>0</i>	<i>3 152</i>
<b>Էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը</b>	<b>մլն կՎտժ</b>	<b>927,2</b>	<b>161,2</b>	<b>1 088,4</b>
<i>հաշվարկային</i>	<i>մլն կՎտժ</i>	<i>28,2</i>	<i>0,0</i>	<i>28,2</i>
<i>բնական ջրահոսքերի վրա</i>	<i>մլն կՎտժ</i>	<i>697,9</i>	<i>136,7</i>	<i>834,7</i>
<i>նոռզման համալիրների վրա</i>	<i>մլն կՎտժ</i>	<i>182,8</i>	<i>24,5</i>	<i>207,3</i>
<i>խմելու ջրատարների վրա</i>	<i>մլն կՎտժ</i>	<i>18,3</i>	<i>0,0</i>	<i>18,3</i>


2022-2024 թթ. ընթացքում ՀՀ-ում գործարկման ենթակա 20 ՓՀԷԿ-երից 13-ը կհանդիսանան բնական ջրահոսքերի վրա կառուցված ՓՀԷԿ-եր: 2022 թվականի փետրվարի 1-ի դրությամբ 41 ՓՀԷԿ-եր, շուրջ 70ՄՎտ հզորությամբ ենթակա չեն լինի սակագնային կարգավորման:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության հաշվետվության

**ԳՈՐԾՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՓՇԷԿ-ԵՐԻ) ԷԼԵԿՏՐՈՎԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՑԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ**


Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	2022 հունվար	2023	2024 հունվար
Կայանների քանակը	գործարկման ենթակա	հատ	30	8	69
	գործող	հատ	31	61	
Կայանների հզորությունը	գործարկման ենթակա	կՎտ	184 073	34 600	274 525
	գործող	կՎտ	55 852	239 925	
Կայաններում էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը	գործարկման ենթակա	մլն կՎտժ	418,7	80,0	606,2
	գործող	մլն կՎտժ	107,5	526,2	
Կայաններում իրականացման ենթակա ներդրումների կանխատեսվող ծավալը (առանց ԱԱՀ)	գործարկման ենթակա	մլն դրամ	72 974,4	13 493,8	86 468

**2004-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂ ՓՉԷԿ-ԵՐԻ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության հաշվետվության

**2004-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱՂԻՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԵՎ ԱՐՏԱՂՈՂ ՓՉԷԿ-ԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱՂՈՒՄՆԵՐԸ**



**Էլեկտրաէներգետիկական համակարգի 2020-2021 թվականների  
հիմնական ցուցանիշները**

(մլն կՎտժ)

h/h	Ցուցանիշներ	2020թ.	2021թ.	Տարբերություն
1	Էլեկտրական էներգիայի արտադրություն	7 723.4	7 674.9	-48.5
2	Էլեկտրական էներգիայի ծախսը արտադրող կայանների սեփական կարիքների համար	370.3	357.6	-12.7
3	Արտադրող կայաններից էլեկտրական էներգիայի օգտակար առաքում *	7 388.3	7 391.2	2.9
4	Էլեկտրական էներգիայի ներհոսք	320.3	368.5	48.2
5	Էլեկտրական էներգիայի կորուստներ բարձր լարման ցանցերում	121.0	106.0	-15.0
6	Էլեկտրական էներգիայի արտահոսք	1 333.1	995.2	-337.9
7	Էլեկտրական էներգիայի կորուստներ բաշխման ցանցերում	444.0	446.0	2.0
8	Էլեկտրական էներգիայի սպառում ըստ սպառման ոլորտների, այդ թվում՝	5 810.4	6 212.5	402.1
1)	<i>Բնակչություն</i>	<i>1 982.7</i>	<i>2 036.4</i>	<i>53.7</i>
2)	<i>Բյուջեպային կազմակերպություններ</i>	<i>194.5</i>	<i>209.7</i>	<i>15.2</i>
3)	<i>Արդյունաբերություն</i>	<i>1 503.8</i>	<i>1 519.7</i>	<i>15.9</i>
4)	<i>Տրանսպորտ</i>	<i>89.3</i>	<i>93.9</i>	<i>4.6</i>
5)	<i>Ոռոգման համակարգ</i>	<i>144.1</i>	<i>171.5</i>	<i>27.4</i>
6)	<i>Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգ</i>	<i>61.5</i>	<i>61.7</i>	<i>0.2</i>
7)	<i>Այլ սպառողներ</i>	<i>1 834.5</i>	<i>2 119.6</i>	<i>285.1</i>

\* «Արտադրող կայաններից էլեկտրական էներգիայի օգտակար առաքում» տողի 2020 և 2021 թվականների ցուցանիշներում ներառված է նաև փոխհոսքերի արդյունքում ինքնավար արտադրողներից բաշխման ցանցեր էլեկտրական էներգիայի առաքումը, համապատասխանաբար՝ 35.2 և 73.9 մլն կՎտժ-ի չափով

**Գազամատակարարման համակարգի 2020-2021 թվականների  
հիմնական ցուցանիշները**

(մլն խմ)

h/h	Ցուցանիշներ	2020թ.	2021թ.	Տարբերություն
1	Ներկրված գազի ծավալը	2 595.4	2 793.8	198.4
2	Վերցվել է գազատարներից և գազի ստորգետնյա պահեստ և կայանից	32.0	36.8	4.8
3	Մղվել է գազատարներ և գազի ստորգետնյա պահեստ և կայան	39.5	28.6	-10.9
4	Գազի կորուստները փոխադրման համակարգում	65.5	74.8	9.3
5	Գազի ծախսը սեփական կարիքների համար՝ փոխադրման համակարգում	3.2	3.3	0.1
6	Գազի կորուստները բաշխման համակարգում	31.1	33.1	2.0
7	Գազի ծախսը սեփական կարիքների համար՝ բաշխման համակարգում	3.2	3.1	-0.1
8	Վերականգնված գազ	0.93	1.1	0.28
9	Բաշխման համակարգում իրացված գազի ծավալը, այդ թվում՝	2 484.196	2 686.6	202.4
1)	<i>Բնակչություն</i>	<i>724.635</i>	<i>766.3</i>	<i>41.665</i>
2)	<i>Էներգետիկա</i>	<i>754.07</i>	<i>832.2</i>	<i>78.13</i>
3)	<i>Արդյունաբերություն</i>	<i>239.266</i>	<i>254.1</i>	<i>14.834</i>
4)	<i>Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)</i>	<i>472.787</i>	<i>505.3</i>	<i>32.513</i>
5)	<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	<i>50.939</i>	<i>56.7</i>	<i>5.761</i>
6)	<i>Այլ սպառողներ</i>	<i>242.501</i>	<i>271.9</i>	<i>29.399</i>

Հավելված N10  
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության  
հաշվետվության

**«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2020-2021 թվականների ջրային հաշվեկշիռը**

(հազ խմ)

h/h	Ցուցանիշներ	2020թ.	2021թ.	Տարբերություն
1	Համակարգ մուտք գործած ջրի ծավալը	551 581.1	548 605.1	-2 976.0
2	Կորուստներ համակարգում	415 005.6	404 291.6	-10 714.0
3	Ջրամատակարարում, այդ թվում՝	136 575.5	144 313.5	7 738.0
1)	<i>Բնակչություն</i>	<i>94 402.2</i>	<i>94 928.4</i>	<i>526.2</i>
2)	<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	<i>8 434.6</i>	<i>9 222.1</i>	<i>787.5</i>
3)	<i>Այլ սպառողներ</i>	<i>28 857.4</i>	<i>34 803.8</i>	<i>5 946.4</i>
4)	<i>Մեծածախ ջրամատակարարում</i>	<i>4 881.2</i>	<i>5 359.2</i>	<i>478.0</i>
4	Ջրահեռացում, այդ թվում՝	107 939.7	112 529.9	4 590.2
1)	<i>Բնակչություն</i>	<i>71 849.6</i>	<i>71 969.6</i>	<i>120.0</i>
2)	<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	<i>7 229.5</i>	<i>7 831.2</i>	<i>601.7</i>
3)	<i>Այլ սպառողներ</i>	<i>24 500.1</i>	<i>28 350.5</i>	<i>3 850.4</i>
4)	<i>Մեծածախ ջրահեռացում</i>	<i>1 240.5</i>	<i>1 267.0</i>	<i>26.5</i>
5)	<i>Երևանի «Մեգրոպոլիտեն» ՓԲԸ</i>	<i>3 120.0</i>	<i>3 111.5</i>	<i>-8.5</i>

Հավելված N11  
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության  
հաշվետվության

**Ոռոգման համակարգի 2020-2021 թվականների ջրային հաշվեկշիռը**

(հազ խմ)

h/h	Ցուցանիշներ	2020թ.	2021թ.	Տարբերություն
1	Ընդամենը ջրառ	1 129 641.8	1 142 524.5	12 882.7
2	Ջրի կորուստները համակարգում	227 410.0	219 647.5	-7 762.5
3	Ջրտուփի կետերում մատակարարված ոռոգման ջուր, այդ թվում՝	902 231.8	922 877.0	20 645.2
1)	Ջրօգտագործողների ընկերությունների մատակարարվող ոռոգման ջուր	896 387.2	916 525.1	20 137.9
2)	Այլ ջրօգտագործողներին մատակարարվող ոռոգման ջուր	5 844.6	6 351.9	507.3



**Էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող՝ գրավոր և բանավոր  
 եղանակով ներկայացված դիմումների 2020-2021 թվականների  
 համեմատական ցուցանիշները**

Ոլորտ	Բնույթը	գրավոր			բանավոր		
		2020թ.	2021թ.	տարբերությունը	2020թ.	2021թ.	տարբերությունը
Էլեկտրամատակարարում	Սպառման համակարգով ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց ներկայացված վճարման հաշիվների մասին	31	23	-8	29	23	-6
	Սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի վերահաշվարկի մասին	1	1	0	3	0	-3
	Էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցման կամ վերականգնման մասին	19	16	-3	40	50	10
	Նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման մասին	8	19	11	76	9	-67
	Էլեկտրամատակարարման ընդհատումների մասին	37	43	6	42	48	6
	Էլեկտրաէներգիայի որակի մասին	55	38	-17	46	32	-14
	Կոմունալ վճարների պարտքի մարման ժամանակացույց կազմելու մասին	48	0	-48	17	3	-14
	<b>Այլ</b>	57	56	-1	94	85	-9
	<b>Ընդամենը</b>	256	196	-60	347	250	-97

**Բնական գազի մատակարարմանն առնչվող՝ գրավոր և բանավոր եղանակով ներկայացված դիմումների 2020-2021 թվականների համեմատական ցուցանիշները**

Ոլորտ	Բնույթ	գրավոր			բանավոր		
		2020թ.	2021թ.	տարբերությունը	2020թ.	2021թ.	տարբերությունը
Գազամատակարարում	Սպառված բնական գազի քանակի և արժեքի վերահաշվարկի մասին	19	29	10	10	3	-7
	Սպառման համակարգով ծախսված բնական գազի դիմաց ներկայացված վճարման հաշիվների մասին	10	5	-5	5	7	2
	Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման մասին	5	2	-3	7	6	-1
	Գազամատակարարման դադարեցման, վերականգնման մասին	13	8	-5	25	7	-18
	Նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման ընթացակարգի մասին	6	3	-3	11	3	-8
	Գազամատակարարման ընդհատումների մասին	0	0	0	0	3	3
	Կոմունալ վճարների պարտքի մարման ժամանակացույց կազմելու մասին	57	0	-57	64	0	-64
	<b>Այլ</b>	30	15	-15	38	19	-19
	<b>Ընդամենը</b>	140	62	-78	160	48	-112

**Խմելու ջրի մատակարարմանն առնչվող՝ գրավոր և բանավոր եղանակով ներկայացված դիմումների 2020-2021 թվականների համեմատական ցուցանիշները**

Ոլորտ	Բնույթը	գրավոր			բանավոր		
		2020թ.	2021թ.	տարբերությունը	2020թ.	2021թ.	տարբերությունը
Ջրամատակարարում	Մատակարարված խմելու ջրի դիմաց ներկայացված վճարման հաշիվների մասին	30	30	0	13	24	11
	Մատուցված ծառայության քանակի և արժեքի վերահաշվարկի մասին	88	74	-14	18	8	-10
	Ջրամատակարարման գրաֆիկի մասին	62	76	14	69	140	71
	Ջրամատակարարման ճնշման մասին	31	36	5	35	22	-13
	Ջրամատակարարման ցանցերի և կոյուղագծերի տեխնիկական վիճակի մասին	27	26	-1	62	65	3
	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման մասին	15	11	-4	30	12	-18
	Խմելու ջրի որակի մասին	3	2	-1	3	7	4
	Այլ	54	25	-29	48	33	-15
	Ընդամենը	310	280	-30	278	311	33

**Հեռահաղորդակցության ոլորտին առնչվող՝ գրավոր և բանավոր եղանակով ներկայացված դիմումների 2020-2021 թվականների համեմատական ցուցանիշները**

Ոլորտ	Բնույթ	գրավոր			բանավոր		
		2020թ.	2021թ.	տարբերությունը	2020թ.	2021թ.	տարբերությունը
Հեռահաղորդակցություն	Վճարման հաշիվների մասին	20	13	-7	11	6	-5
	Կատարված վերահաշվարկի մասին	0	0	0	1	3	2
	Ծառայությունների բաժանորդագրվելու մասին	0	0	0	1	2	1
	Ծառայությունների դադարեցման կամ վերականգնման մասին	9	4	-5	11	14	3
	Ծառայության որակի մասին	0	5	5	12	12	0
	Այլ	27	23	-4	25	19	-6
	Ընդամենը	56	45	-11	61	56	-5